

Սաֆարովի հանձնումն Ադրբեջանին հնարավոր կլինի այլ կերպ գնահատել միայն այն դեպքում, երբ ԱՄՆ-ն, ՆԱՏՕ-ն և ՆԱՏՕ-ի անդամ պետությունները կոնկրետ պատժամիջոցներ կիրառեն Ադրբեջանի, ինչպես նաև Հունգարիայի դեմ:

2004 թ. դատավճռի անհամարժեքությունը

Ես այսօր մանրամասն չեմ խոսի կատարված դեպքի՝ մարդասպանի հանձնումն Ադրբեջանին կանխելու Հայաստանի Հանրապետության անկարողության և դրա պատճառների մասին: Մակայն իրավաքաղաքական առումով մի խիստ կարևոր փաստ վերհիշելն անհրաժեշտ է:

2004 թ. Բուդապեշտում կատարված ոճիրը տուժող կողմը (Հայաստանի Հանրապետությունը) ժամանակին պետք է որակեր որպես **ազգային ատելության հողի վրա կատարված պետական անաբեկչության արարք, որը նախապատրաստել էին ադրբեջանական հատուկ ծառայությունները՝ իրենց թուրք գործընկերների հնարավոր մասնակցությամբ** (հիշեցնենք, որ մարդասպանը ուսանել է Ստալինյան ռազմական քոլեջում 1992-1996 թթ., իսկ 1996-2000 թթ. Թուրքիայի ռազմական ակադեմիայում), այլ ոչ թե գոհունակությամբ ընդունել Բուդապեշտի դատարանի Հունգարիայի Քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի համաձայն կայացրած լրողված վճիռը, ըստ որի՝ հանցագործը ինչ-որ (չճշտված) «ստոր մղումներից» կատարել է «սպանություն ծանրացուցիչ հանցամասնություն», Գուրգեն Մարգարյանի սպանությունից մեկ ամիս անց, երբ դեռ շատ ժամանակ կար մինչև բուդապեշտյան դատավարության սկիզբը, ես առաջարկեցի պահանջել այլ մեղադրանքի առաջադրում, ընդգծելով, որ առկա փաստերը «հայկական կողմին լիովին իրավունք են տալիս պնդելու սպանության այնպիսի վարկածի վրա, որը մատնանշում է ադրբեջանական հատուկ ծառայությունների կանխամտածված ու մանրամասնորեն ծրագրված գործողությունը: Այսինքն խոսքը պետական հանցագործության մասին է» (տե՛ս [Armen Айвазян, “Убийство в Будапеште – спланированная операция азербайджанских спецслужб”](#), Новое Время, 30 марта 2004 г. Впервые опубликовано Агентством Де-факто, 29.03.2004 г.): Այն, որ մարդասպանը Բաքվում ոչ միայն անմիջապես ազատ է արձակվել, այլև պարզևստրվել է զինվորական կոչումով, բնակարանով և մեզ անհայտ այլ միջոցներով, այն, որ նրան վճարվել է ութ տարվա չստացած աշխատավարձը, գալիս է արդեն լրացուցիչ անգամ մեկընդմիջտ հաստատելու հենց այս վարկածը՝ Ռ. Սաֆարովը կատարել է հատուկ հանձնարարություն, որը նրան վստահվել էր Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից: Այս առումով դատաիրավական իրավիճակը նույնպես որակապես փոխվել է: **Բուդապեշտյան դատարանի վճռի անհամարժեքությունը, ինչպես նաև ադրբեջանական վանդալության անպատիժ մնալն ավելի քան բավարար հիմք են, որպեսզի Հայաստանում անցկացվեն առանձին դատավարություններ ու հեռակա դատավճիռներ կայացվեն ինչպես այդ հանցագործությունների կազմակերպիչների, այնպես էլ կատարողների նկատմամբ.**

ՀՀ իրավաքաղաքական անելիքները

Այս հրապարակմամբ կանդրադառնամ միայն այն քայլերին, որոնք, իմ կարծիքով, պարտավոր է (և, կառուցվածքային առումով, ի վիճակի է) իրականացնելու միայն օրվա պետական իշխանությունը՝ հայությունն էլ ավելի մեծ, զանգվածային կոտորածից փրկելու համար: Ընդդիմադիր ուժերը, քաղաքացիական հասարակությունը կամ Սփյուռքը շատ բան անել, ցավոք, չեն կարող:

Ներքին և արտաքին ասպարեզում ձեռնարկվելիք միջոցառումների ցանկում առաջարկում եմ ներառել հետևյալ քայլերը՝

1. **Անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի «Ինտերպոլ»-ը Ռամիլ Սաֆարովի միջազգային հետախուզում հայտարարի:** Այս խնդիրն առավել արագ և դյուրին լուծում կստանա, եթե «Ինտերպոլ»-ին այդ խնդրանքով դիմեն Հունգարիան (որպես պետություն, որի տարածքում տեղի է ունեցել սպանությունը), ՆԱՏՕ-ն (որպես միջազգային իրավական սուբյեկտ, որի կազմակերպած միջոցառման ժամանակ է տեղի ունեցել սպանությունը) և նրա առանձին անդամ պետությունները: Եթե այդ նվազագույն արդար պահանջը ևս չկատարվի, ապա Հայաստանի Հանրապետությունը պետք է կտրուկ իջեցնի ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերությունների ներկա մակարդակը: **Մակայն անկախ այդ ամենից՝ պարտադիր է նաև Հայաստանում անցկացնել Ռ. Սաֆարովի հեռակա դատավարությունը և կայացնել հեռակա դատավճիռ այս հանցագործության կազմակերպիչների և կատարողների նկատմամբ՝ որակելով կատարվածը որպես մարդկայնության դեմ հանցագործություն:** (Այժմ արդեն կարելի է նույնիսկ ենթադրել, որ 2004 թ. Բուդապեշտում հայի նկատմամբ կատարված ցեղասպանական ակտը՝ էթնիկական հողի վրա նրա դաժանագույն սպանությունը, հունգարական դատարանը որակեց որպես սովորական «սպանություն ծանրացուցիչ հանցամասնություն»՝ հետագայում ավելի հեշտորեն Ադրբեջանի հետ հայի արյան շուրջ առուձախի մեջ մտնելու համար:) Կայացված դատավճռի և Հայաստանի տարածքում Սաֆարովի հետախուզումը հայտարարելուց հետո՝ կարելի է դիմել նաև միջազգային բոլոր պատկան ատյաններին, առաջին հերթին՝ Ինտերպոլին:
2. Ելնելով Հայաստանի ազգային անվտանգության ընդգծված առանձնահատկություններից, որոնք արտահայտվում են հատկապես հայ ժողովրդի դեմ շարունակվող ցեղասպանական քաղաքականության, դրան միջազգային իրավական գնահատական չտալու և այն վարողների Թուրքիայի և Ադրբեջանի երկարատև անպատժելիությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը պետք է արմատապես վերանայվի ինչպես մարդկայնության դեմ հանցագործությունների, այնպես էլ դրանց դեմ արդյունավետ դատավարություններ կազմակերպելու հարցերում: ՀՀ Ազգային ժողովի առաջիկայում կայանալիք արտակարգ նիստի օրակարգում պետք է ներառել կարծում եմ, հետևյալ հարցը՝ փոխել **ՀՀ օրենսդրությունը, այն է՝ ցեղասպանության և, մասնավորապես, հայասպանության դեպքերի համար սահմանել մահապատիժ:** Ճիշտ է, միջազգային դատական պրակտիկայում հեռակա դատավարություններն արդարադատության բավականին հազվադեպ ձև են, քանի որ մեղադրյալի բացակայությամբ ընթանալով՝ սահմանափակում են նրա դատավարական պաշտպանության հնարավորությունները: Բայց այդպիսի դատավարությունները հանրաժանոք երևույթ են, երբ գործը վերաբերում է ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին, իսկ հանցագործներն ինչ-ինչ պատճառներով բռնված ու ներկայացված չեն

արդարադատությանը: Այսպես, 1919 թ. Ստամբուլում ստեղծված ռազմական արտակարգ տրիբունալները հեռակա կարգով դատապարտեցին երիտթուրք առաջնորդներից շատերին: Աշխարհի ամենատարբեր պետություններում բազմաթիվ հեռակա դատավարություններ են անցկացվել նացիստական հանցագործների նկատմամբ: Միայն 2009-2010 թթ. նացիստական ռազմական հանցագործությունների համար դատապարտվել է հինգ հոգի, որոնցից երկուսը Գերմանիայում, իսկ երեքը Բուլղարիայում՝ հեռակա կարգով:

- 3. Հարկ է առանց հապաղելու **ՀՀ իրավասու քննչական մարմնում ստեղծել հատուկ քննչական խումբ, որն իր վրա կվերցնի նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային Ադրբեջանի շրջաններում ու քաղաքներում, Արցախում ու Նախիջևանում հայության դեմ կատարված հանցագործությունների փաստերի հավաքագրումն ու վերլուծությունը, ինչպես նաև այդ վիթխարի գործի նախապատրաստությունն ընդհանուր դատավարությանը:** Քննչական օժանդակ մի խումբ էլ պետք է ստեղծել ԼՂՀ-ում: Այնուհետև հենվելով միջազգային իրավունքի՝ մարդկայության դեմ կատարված հանցագործությունների գործող օրենսդրական մեծ կորպուսի վրա, պետք է անցկացնել բուն դատավարությունը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Դատավարության նախապատրաստության և անցկացման աշխատանքներին հարկավոր է ներգրավել բարձրագույն որակավորում ունեցող միջազգային մասնագետների: Հայաստանում անցկացված հեռակա դատավարությունների նյութերն այնուհետև պետք է մաս-մաս կամ ամբողջությամբ փոխանցվեն միջազգային դատական աստիճաններին, առաջին հերթին՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանին կամ Ադրբեջանում հայասպանության և էթնիկական գոտումների մասին գործով հատուկ ստեղծվելիք միջազգային տրիբունալին (Հաագայում): Միջազգային դատարանում Հայաստանն Ադրբեջանից հայցելու է նյութական ու ֆինանսական տուգանքներ, բարոյական, մշակութային և հողային փոխհատուցում, ինչպես նաև բռնագրավված տարածքների վերադարձ:

- 4. **ՀՀ-ն պետք է ոչ թե՛ ՆԱՏՕ-ի և նրա անդամ գլխավոր պետությունների հայեցողությանը թողնի, թե՛ ինչպիսի գնահատական նրանք կտան Հունգարիայի և Ադրբեջանի գործողություններին, այլ նրանցից շատ հստակ ու կոնկրետ քայլեր պահանջի, մասնավորապես՝ Ադրբեջանի նկատմամբ լուրջ դիվանագիտական, իրավաքաղաքական և սնտեսական պատժամիջոցներ կիրառելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը՝ որպես տուժող կողմի, որոշակիորեն փոխհատուցելու առումով:** Այդ պահանջները կարող են մասամբ բացահայտորեն հնչեցվել, մասամբ էլ՝ ոչ-հրապարակային լինել (դրանք այստեղ չենք քննարկի):

- 5. **Եթե ՆԱՏՕ-ն, ինչպես նաև Եվրոպական Միությունը, որի անդամ է Հունգարիան, կոնկրետ պատժամիջոցներ չկիրառեն Ադրբեջանի նկատմամբ, իսկ, ըստ ամենայնի, հենց այդպես էլ կլինի, ՀՀ-ն պետք է վերանայի այդ միջազգային կազմակերպությունների հետ խորացված հարաբերություններ հաստատելու իր**

որդեգրած գիծը: Մի շարք համատեղ ծրագրեր պետք է չեղյալ հայտարարել, իսկ մյուսների մակարդակը իջեցնել: Մասնավորապես, պետք է օրենսդրորեն անմիջապես վերացվեն այն բոլոր զիջումները, որոնք արվել են մեր ազգային արժեքների հաշվին՝ հանուն հեռու և անորոշ ապագայում ԵՄ-ին անդամագրվելու:

- 6. **Դադարեցնել Ադրբեջանին և Թուրքիային խաղաղեցնելու անհեռանկար, իրականում՝ պարտվողական քաղաքականությունը:** Ցեղասպանի հետ բանակցելն անիմաստ է ու վտանգավոր: Նրան պետք է դիմադրել, զսպել ու պատժել հնարավոր ու անհնար բոլոր միջոցներով: Մասնավորապես, պետք է վերջ դնել Մինսկի խմբի շրջանակներում տարվող բանակցություններին այն կտրվածքով, որով նախատեսվում է տարածքային զիջումներ կատարել հոգուտ ցեղասպանական քաղաքականություն վարող պետության, այսինքն՝ նվազեցնել մեր ռազմական ու ֆիզիկական անվտանգության մակարդակը:
- 7. **Միջազգային ասպարեգում փնտրել նոր, առավել վստահելի գործընկերներ և հնարավոր ռազմավարական դաշնակիցներ:** Բացի Ռուսաստանից, դա կարող են լինել, ևս մեկ-երկու պետություն, գուցե առաջին հերթին Չինաստանը:
- 8. **ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները քաղաքական և իրավական հանգամանալից գնահատականներ պետք է տան Ադրբեջանի և Թուրքիայի Հայաստանի և հայ ժողովրդի դեմ վարած պետական ֆաշիզմի և հակահայկական ռասիզմի քաղաքականությանը, այլ չսպասել, որ այդ գնահատականը մեկ ուրիշը պետք է տա, ինչպես իր օգոստոսի 31-ի ելույթում հայտարարեց ՀՀ նախագահը:** Որևէ մեկը չի կարող թուրք-ադրբեջանական քաղաքականությանը տալ ավելի ճշգրիտ իրավաքաղաքական գնահատական, քան Հայաստանն ու հայությունը:
- 9. **Անհրաժեշտ է կատարել լայնածավալ կադրային փոփոխություններ ՀՀ արտաքին հարաբերությունները և քարոզչության ոլորտը տնօրինող պետական գերատեսչություններում և այլնայլ այն մարմիններում, որոնք տապալեցին մարդասպանի հանձնումը Ադրբեջանին թույլ չտալու գործը,**

ՀՀ իշխանությունները պետք է արմատապես վերանայեն ինչպես իրենց արտաքին, այնպես էլ ներքին ռազմավարական դիրքորոշվածությունը: Որևէ այլ պետության ու ժողովրդի նկատմամբ հազիվ թե կհոարվեր այն անամոթ միջազգային առուժախը, որ կատարվեց հայի արյան հաշվին: Տեղի ունեցածը իսկական ահազանգ պետք է լինի թե՛ ՀՀ իշխանությունների, թե՛ ամբողջ հայ ժողովրդի համար: ՀՀ իշխանությունը և հայ ժողովուրդը պետք է բացեն աչքերը և հասկանան, որ այն ծայրահեղ արհամարհանքը, որ Հունգարիան ու նրա թիկունքում կանգնած ուժերը ցուցաբերեցին մեր նկատմամբ, գալիս է մեր ծայրահեղ թուլությունից, անկազմակերպվածությունից, պառակտվածությունից, մեր սեփական երկրում ու պետության մեջ ազգային շահերի ու արժեքների արհամարհված լինելուց:

*Ա Այվազյան,
քաղաքական գիտությունների դոկտոր
02.09.2012*

Շայաստան

Հայ ժողովուրդը դա չի ներելու. Հայաստանը կասեցրեց դիվանագիտական հարաբերությունները Հունգարիայի հետ
Օգոստոս 31, 2012 | 20:23

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ օգոստոսի 31-ին արտակարգ խորհրդակցություն է հրավիրել Հայաստանում հավատարմագրված ՄԱԿ-ի անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և Հայաստանում գործող միջազգային կառույցների ղեկավարների մասնակցությամբ, որտեղ ներկայացրել է Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում ՀՀ ՉՈՒ սպա Գուրգեն Մարգարյանին 2004թ. ազգային ատելության հողի վրա դաժանաբար սպանած Ադրբեջանի ՉՈՒ սպա Ռամիլ Սաֆարովին պատիժը կրելու համար Հունգարիայի իշխանությունների կողմից գաղտնի Ադրբեջան տեղափոխելու փաստի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության տեսակետն ու ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունված որոշումը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ

Բարեւ ձեզ հարգարժան դեսպաններ, Ցավոք, այսօր արտառնոց առիթով ենք ձեզ հրավիրել նախագահի նստավայր: Ինչպես գիտեք, հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած ադրբեջանցի զինծառայողը Հունգարիայի կողմից վերադարձվել է Ադրբեջան: Եվ ինչպես մենք նախագուշացնում էինք բազմաթիվ անգամներ, Ադրբեջանի նախագահի կողմից անհապաղ ներում է շնորհվել նրան:

Դա տեղի է ունեցել, քանի որ Եվրոպական միության և ԱՄՏՕ-ի անդամ Հունգարիայի իշխանությունները գործաբքի մեջ են մտել Ադրբեջանի իշխանությունների հետ:

Չեմ ուզում կրկին անդրադառնալ Գուրգեն Մարգարյանի սպանության հանգամանքներին. դրանք բոլորին քաջ հայտնի են: Ինչպես ցույց տվեց դատավարությունը, այդ վայրագությունը տեղի էր ունեցել միայն այն պատճառով, որ Գուրգեն Մարգարյանը հայ էր:

Այդ հանցագործության կատարումից անմիջապես հետո ինչպես Հունգարիայի իշխանությունները, այնպես էլ Եվրոպական միության և ԱՄՏՕ-ի անդամ երկրները՝ մեր գործընկերները, մեզ անընդհատ հորդորում էին չքաղաքականացնել այս գործը: Մեզ անընդհատ հորդորում էին վստահել այդ կարեւոր դաշինքի անդամ հանդիսացող Հունգարիայի արդարադատությանը:

Մենք ամենայն ուշադրությամբ հետևում էինք ոճրագործի շուրջ բոլոր զարգացումներին: Հունգարիայի նախագահի, խորհրդարանի խոսնակի, արտաքին գործերի նախարարի, դեսպանի հետ մեր յուրաքանչյուր հանդիպման ժամանակ այս հարցն արծարծվել է, և մենք բազում անգամ ստացել ենք հավաստիացումներ, որ հանցագործի վերադարձը Ադրբեջան կամ փոխանցումը բացառվում է: Նույնն են ասել մեր հարցումների ի պատասխան Հունգարիայի արտաքին գերատեսչությունում և խորհրդարանում վերջին օրերի շփումների ընթացքում: Տեղի ունեցած ուխտադրուժ զարգացումների արդյունքում մարդասպանը հայտնվեց Բաքվում և ազատության մեջ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա ես ոչինչ չունեմ ասելու: Ուղղակի ոչինչ չունեմ ասելու: Այդ երկիրը իր քայլերով խոսում է իր մասին, և ես չեմ, որ դա պետք է բացատրեմ:

Պարոնայք եւ տիկնայք դեսպաններ, Իրենց այս համատեղ գործողություններով Հունգարիայի և Ադրբեջանի իշխանությունները դուռ բացեցին նման հանցագործությունների կրկնության համար: Այս որոշմամբ նրանք ուղերձ են տալիս մարդասպաններին: Նրանք այսուհետեւ գիտեն, որ էթնիկ կամ կրոնական ատելության հողի վրա կատարված սպանությունը կարող է անպատիժ մնալ:

**ԵՍ ԴԱ ՀԱՆԴՈՒԻԹԵԼ ՉԵՄ ԿԱՐՈՂ:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ
ՀԱՆԴՈՒԻԹԵԼ ՉԻ՛ ԿԱՐՈՂ:
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԴԱ ՉԻ ՆԵՐԵԼՈՒ:**

Ես պաշտոնապես հայտարարում եմ, որ այսօր մենք կասեցնում ենք Հունգարիայի հետ դիվանագիտական հարաբերությունները և բոլոր պաշտոնական կապերը: Մենք ակնկալում ենք մեր բոլոր գործընկերների հստակ և միանշանակ գործողությունները այս դեպքի կապակցությամբ:

Այս ամենը հանդուրժողները վաղը պատասխան են տալու պատմության առջեւ: Կեցողություններն ու դատարկախոսությունները անընդունելի են:

Տեղի ունեցածի հանդեպ գործողությունների հիման վրա ենք մենք դատելու հայ ժողովրդի անվտանգության հանդեպ մեր գործընկերների վերաբերմունքի մասին: Խնդրում եմ ձեզ ամենաշտապ կերպով փոխանցել իմ այս անձնական ուղերձը ձեր պետությունների ղեկավարներին ու կառավարությունների ղեկավարներին:

Այսբանը: Չգիտեմ, իմաստ ունի՞ հարց ու պատասխան սկսել, թե՞ ոչ: Կարծում եմ, որ ոչ, որովհետեւ, իրոք, տեղի ունեցածը մի այնպիսի բան է, որ Նորմալ մարդու, Նորմալ գործչի ուղեղի մեջ շատ մեծ դժվարությամբ կարող է տեղավորվել: Չեմ ուզում ավելորդ բառեր ասել, բայց զարգացած երկիրը, իրեն քաղաքակիրթ համարող երկիրը իրավունք չունի այսպես վարվելու, և այդպիսի երկիրն արժանի է իր գործընկերների գնահատականին:

Ալիևը հնարավոր է Սաֆարովին ոչնչացնի՝ «ձախված» հայի ձեռքով և աշխարհին ցույց տա, թե Հայաստանն է պատվիրել. Կոմանդոս



Ռամիլ Սաֆարովը հայ սպա Գուրգեն Մարգարյանին ինքնաբուխ է սպանել, թե՞ կատարել է պետական հրահանգ, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) կոնկրետ պնդումներից զերծ է մնում, բայց

ըստ Արցախի հերոսի, անվիճելի է, որ Մաֆարովի արտահանման Ադրբեջանի, Թուրքիայի և Հունգարիայի միասնական ծրագիրն է եղել:

Կոմանդոստ այսօր տեղի ունեցած ասուլիսի ժամանակ զգուշացրեց, որ Մաֆարովի արտահանման «ալիկյան» ծրագրի միայն առաջին փուլն է:

Երկրորդն, ըստ նրա, առավել վտանգահարույց է լինելու մեզ համար, որն ենթադրում է ադրբեջանցի մարդասպանի ոչնչացում. «Ադրբեջանն ու Թուրքիան ունեն վաղօրոք մշակված ծրագրեր: Այժմ նրանք ամենայն ուշադրությամբ հետևում են Հայաստանում տարբեր մակարդակներով արվող յուրաքանչյուր հայտարարության և քայլի՝ փորձելով օգուտներ քաղել դրանցից: Մենք հիմա պետք է շատ զգույշ լինենք, շատ լուրջ և խելացի քայլեր անենք՝ թույլ չտալու Ալիևի սեփական հեղինակության բարձրացմանն ուղղված հերթական պրովոկացիան. Ալիևը կարող է Ռամիլ Մաֆարովին ոչնչացնելու հրահանգ տա և շատ հնարավոր է, որ դա անի «ծախված» հայի ձեռքով և բարդի Հայաստանի վրա, որպեսզի ամբողջ աշխարհին ապացույցի, թե մենք տեռորիստ ենք: Հիշեք քաղաքագետ Մելիք-Շահնազարյանի հետ կատարվածը: Մենք պետք է սա հաշվի առնենք և թույլ չտանք, որ այդ պրովոկացիան կատարվի: Ես վախենում եմ՝ նորից ուշացած քայլեր չանենք: Այս անգամ միջազգային հանրությունը կարող է հավատալ դրանց: Ադրբեջանի ու Թուրքիայի դիվանագիտությունը շատ ուժեղ է և մենք չպետք է սխալ քայլեր անենք»:

Խոսելով այս հարթությունում պատերազմի վերսկսման հնարավորության մասին՝ Արկադի Տեր-Թադևոսյանը նկատեց, թե Ադրբեջանն ամեն ինչ անում է, որ իրադրությունը սրվի և պատերազմական գործողություններ սկսվեն և դա անել միջազգային հանրության աջակցությամբ: «Եթե կռիվ լինի, մեծ կորուստներ կլինեն, բայց հաղթանակը մերը կլինի»,- լրացրեց Կոմանդոսը՝ պնդելով, թե Հայաստանի առաջին հակաքայլը ադրբեջանական սադրանքներին՝ պետք է լինի Արցախի անկախության ճանաչումը:

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվն աճել է



2012 թ. առաջին կիսամյակում Հայաստան են այցելել 281 հազ. զբոսաշրջիկներ՝ 5.1 %-ով գերազանցելով 2011 թ. առաջին կիսամյակի ցուցանիշը: Այդ մասին տեղեկացնում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 302 հազ. մարդ կամ 2011թ հունվար-հունիսի նկատմամբ ցուցանիշն աճել է 9.3%-ով: Հայաստան այցելած զբոսաշրջիկներից միայն 22%-ն է հանգրվանել հյուրանոցներում (մոտ 62 հազ. մարդ): Սակայն նախորդ տարվա համեմատ հյուրանոցներում հանգրվանածների թիվն աճել է 9.5 հազարով:

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2012թ. հունվար-հունիսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 20.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 36.9%-ը՝ ԵՄ երկրներին եւ 42.6%՝ այլ երկրներին:

«Հրայյա Աճառյան» համալսարանը դադարեցնում է բարձրագույն կրթական



ծրագրերի իրականացումը

31 Օգոստոսի 2012

Երևանի "Հրայյա Աճառյան" համալսարանի ռեկտոր Ա. Խաչատրյանը նամակով դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանին և տեղեկացրել, որ "Հրայյա Աճառյան" համալսարանը դադարեցնում է բարձրագույն կրթական ծրագրերի իրականացումը: Միաժամանակ Ա. Խաչատրյանը շնորհակալություն է հայտնել նախարարությանը երկարամյա և արգասաբեր համագործակցության համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տեղեկացնում է, որ "Հրայյա Աճառյան" համալսարանի բոլոր ուսանողներին կառաջարկվի ըստ մասնագիտությունների կրթությունը շարունակել Հայաստանի հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բոլոր հարցերով ուսանողները կարող են դիմել ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն՝ հեռ. 52-56-62:

Գրողների պաստառները շենքերի վրա

31 Օգոստոսի 2012 - 17:36

Մայրաքաղաքի որոշ շենքերի վրա նկատելի են հայ գրողների նկարներով և բանաստեղծական տողերով պաստառներ:

Դրանք շենքերի վերին հատվածում են գտնվում և լավ տեսանելի են: Շենքերի վրա պաստառների հայտնվելը պայմանավորված է Երևանը 2012 զրքի համաշխարհային

մայրաքաղաք ճանաչվելու փաստով: Չուսանք, որ այս տեսակ քայլերը, որոնք ուղղված են գրքի հանդեպ ուշադրության անեռմանը, իրենց ազդեցությունը կթողնեն:

Եղվարդ Նալբանդյանը ելույթ է ունեցել Չմիացած երկրների շարժման գագաթաժողովին



Օգոստոս 31, 2012 | 20:19

Օգոստոսի 30-31-ը Թեհրանում տեղի ունեցավ Չմիացած երկրների շարժման 16-րդ գագաթաժողովը, որին ներկա էին կազմակերպության 120 անդամ եւ 17 դիտորդ երկրների բարձրաստիճան պատվիրակությունները, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը:

Գագաթաժողովի աշխատանքներին Հայաստանի պատվիրակությունը գլխավորող ԱԳ Նախարար Եղվարդ Նալբանդյանը օգոստոսի 31-ին հանդես է եկել ելույթով, որը որպես գագաթաժողովի պաշտոնական փաստաթուղթ տարածվեց մասնակից պետությունների պատվիրակություններին:

Իր խոսքում Նախարար Նալբանդյանը մասնավորապես նշել է. «Հանդիսանալով Չմիացած երկրների շարժման դիտորդ, Հայաստանը կիսում է այդ կազմակերպության արժեքները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների եւ սկզբունքների, մարդու հիմնարար իրավունքների հանդեպ հարգանքի վրա:»

Անդրադառնալով արցախյան հիմնախնդրին՝ Եղվարդ Նալբանդյանը դիմելով ներկա բարձրաստիճան պատվիրակություններին նշեց, «Համոզված եմ, որ կարելու է այս հարգարժան լսարանին ներկայացնել Ադրբեջանի կողմից գագաթաժողովի հայտարարության 391-րդ պարբերության շուրջ իրականացված մանկապույազիայների վերաբերյալ իրողությունը: Ադրբեջանը ընդհամենը մեկ տարի առաջ դարձավ Չմիացած երկրների շարժման անդամ, եւ արդեն փորձում է շահարկելով իր անդամակցությունը, թյուրիմացության մեջ զգել կազմակերպության անդամ երկրներին՝ ուղղորդելով նրանց միջազգային հանրության դիրքորոշումների դեմ:

Այս պարբերությունը հակասության մեջ է մտնում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի տրամաբանությանը, ոգուն ու ձեռակերպումների, որոնք արտացոլված են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ղեկավարների լ՛Աբվիլայում, Մոսկոկայում, Դովիլում եւ Լոս - Կաբոսում ընդունված հայտարարություններում, ինչպես նաեւ ԵԱՀԿ

շրջանակներում՝ Աստանայի գագաթաժողովի, Յելսինկիի, Աթենքի, Ալմաթիի, Վինյուսի Նախարարական հանդպիպումների շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ընդունված հայտարարություններում:

Այս փաստաթղթերը կարևորում են միջազգային իրավունքի երեք սկզբունքների՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի եւ տարածքային ամբողջականության՝ որպես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման անկյունաքարային տարրեր:

Ցավոք, 391-րդ պարբերությունը անտեսում է ինքնորոշման իրավունքի սկզբունքը եւ չի օգտագործում միջազգայնորեն ընդունված «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր» եզրույթը:

Նման մոտեցումը ոչ միայն վտանգում է բանակցային գործընթացը եւ փխրուն իրավիճակը հակամարտության գոտում, այլեւ հակասում է Չմիացած երկրների շարժման հիմնարար սկզբունքներին: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը շարժման հիմնադրման օրվանից եղել և մնում է վերջինիս հիմնասյուններից մեկը, որն ընգծված է բոլոր գագաթաժողովների եւ Նախարարական հանդիպումների փաստաթղթերում:



Ադրբեջանի համար սովորական է դարձել միջազգային իրավունքի հիմնարար նորմերի եւ ձեռք բերված պայմանավորվածությունների խախտումը: Այդ առումով որեւիցե մեկի համար անակնկալ չէ, որ Ադրբեջանը, հանդիսանալով Չմիացած երկրների շարժման անդամ, շարունակաբար խախտում է «Բանդունգի սկզբունքները»՝ խտրականություն եւ ազգային ատելություն քարոզելով: Միջազգային կազմակերպությունները բազմիցս համապատասխան գնահատականներ են տվել Ադրբեջանում քսենոֆոբիայի, ռասիզմի եւ անհանդուրժողականության դրեսենդրումներին:

Իր ողջ պատմության ընթացքում Չմիացած երկրների շարժումը աշակցել է հակամարտությունների բացառապես խաղաղ կարգավորմանը, մինչ Ադրբեջանը իր ամենօրյա ռազմատենչ հայտարարություններով, ռազմական բյուջեի բազմապատկմամբ՝ քսան անգամ վերջին հինգ տարում, հարձակողական սպառնալիքությունների հսկայական քանակի ձեռքբերմամբ՝ ի խախտումն իր միջազգային պարտավորությունների, ուժի կիրառման շարունակական սպառնալիքներով՝ վտանգում է ոչ միայն տարածաշրջանային, այլեւ միջազգային կայունությանը և անվտանգությանը: Նման վարքագիծը հարիր չէ Չմիացած

երկրների շարժման անդամ պետությանը և ավելին, հարված է հասցնում այս կազմակերպության հեղինակությանը», - նշել է Հայաստանի արտգործնախարարը:

Հայաստանը Իրան է ուղարկել 139 հազար դոլարի հումանիտար օգնություն



Օգոստոս 20, 2012 | 16:23

Հայաստանը երկրաշարժից տուժած Իրան է ուղարկել 57 միլիոն դրամի (մոտ 139 հազար դոլար) մարդասիրական օգնություն: Այս մասին այսօր՝ օգոստոսի 20-ին, լրագրողներին հայտնել է Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը: Նրա խոսքով, նա արդեն կապ է հաստատել իրանցի գործընկերոջ հետ եւ նրանց խնդրել է ներկայացնել ահրաժեշտ իրերի ցուցակ:

Ինչպես պարզաբանել է պաշտոնյան, օգնությունն արդեն ուղարկվել է, սակայն Հայաստանը պատրաստ է լրացուցիչ օգնությամբ աջակցել: «Մենք Սալիտակ ենք տեսել եւ գիտենք, թե ինչ է նշանակում երկրաշարժից տուժել», - ավելացրել է նախարարը: Նա նաեւ նշել է, որ Հայաստանն Իրանին առաջարկել է փրկարարների աջակցություն, որից Իրանը հրաժարվել էր:

Հայաստանը արդեն Իրան է ուղարկել 26 հազար պահածոներ, 40 հազար լիտր խմելու ջուր, 700 մարդու համար նախատեսված 81 վրան, 1000 ծածկոց, 6 հազար սավան, 460 քնելապարկ, 100 բացվող մահճակալներ: Օգնությունը ուղարկվել է օգոստոսի 17-ին՝ «ԿԱՄԱՉ» մակնիշի 5 բեռնատարներով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՆՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՍԻՐԻԱԶԱՅ ԵՐԵՒԱՆ

«Շենգավիթ» բժշկական կենտրոնում ծնվել է սիրիահայ առաջին փոքրիկը՝ սիրիահայ Ալին եւ Պերճ Սալիբյանների որդին: Նորածին Քրիստը սիրիական ներքաղաքական զարգացումներից ի վեր առաջին երեխան է, որը ծնվել է Հայաստանում՝ որպես ՀՀ քաղաքացի: Սալիբյանների ընտանիքը Հայաստան էր ժամանել շուրջ մեկ ամիս առաջ:

Երեկ սփյուռքի նախարար Հրանտը Հակոբյանը այցելել է «Շենգավիթ» բուժկենտրոն, որտեղ շնորհավորել է նորածնի մայրիկին եւ հույս հայտնել, որ նրա երեխան կդառնա Հայաստանի արժանի քաղաքացի ու զինվոր: Նախարարը վստահեցրել է, որ սփյուռքի նախարարությունը կշարունակի հոգաձությունն այս ընտանիքի հանդեպ, ու եթե Սալիբյանները որոշեն

հաստատվել Հայաստանում, կաջակցեն երիտասարդ հորը աշխատանք գտնելու հարցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՐ՝ ՇԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵՌԱԿԻ ՀԱՂԹՈՂ

09 Սեպտեմբերի 2012 - 17:48



Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը հռչակվում է Շախմատի համաշխարհային օլիմպիադայի հաղթող:

Մեր հավաքականը Ստամբուլում ընթացող օլիմպիադայի վերջին տուրում այսօր՝ սեպտեմբերի 9-ին, պարտության մատնեց Հունգարիային 2,5-1,5 հաշվով:

Նույն տուրում մեր հիմնական մրցակից Չինաստանը զիջեց Ուկրաինային, իսկ մեզ հետ հավասար միավորներ ունեցող Ռուսաստանի ընտրանին հաղթեց Գերմանիայի 3:1 հաշվով: Ասպիտով, Հայաստանն ու Ռուսաստանը հավասար միավորներ հավաքեցին (19 միավոր), իսկ լրացուցիչ միավորներով առաջինը մեր հավաքականն է: Նշենք, որ ներկայում ՖԻԴԵ-ն վերջնահաշվարկներն է անում, և դեռ պաշտոնապես հաղթողի անունը չի նշվել: HayNews.am

Հանցագործության գովաբանումը չի հանգեցնի խաղաղության. ԵԱՀԿ Մինսկի խումբ

03 Սեպտեմբերի 2012 - 18:30

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Փարիզում հանդիպումներ ունենալով Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Էլմար Մամեդյարովի հետ, հետևյալ հայտարարությունն են տարածել.

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները (Դեսպաններ Ռոբերտ Բրադկեն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Իգոր Պոպովը՝ Ռուսաստանի Դաշնություն եւ Ժակ Ֆորեն՝ Ֆրանսիա, ինչպես նաև ԵԱՀԿ ղեկավարի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը սեպտեմբերի 2-ին հանդիպեցին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի, իսկ սեպտեմբերի 3-

ին Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հետ: Համանախագահները քննարկել են Ադրբեջանի նախագահի՝ օգոստոսի 31-ի որոշումը, որով ներում էր շնորհվում ադրբեջանական բանակի սպա Ռամիլ Մաֆարովին, ով Հունգարիայում դատապարտվել էր ցմահ բանտարկության՝ 2004 թ-ին Բուդապեշտում հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանության համար: Նրանք իրենց խորը մտահոգությունն ու ափսոսանքն են հայտնել այս որոշման կապակցությամբ և նշել, որ հանցագործությունը գովաբանելու ցանկացած փորձ չի հանգեցնում խաղաղության հաստատմանն ու կողմերի միջև վստահության ամրապնդմանը: Նրանք նաև վերահաստատել են Լեռնային Ղարաբաղի խնդիրը խաղաղ բանակցությունների հիման վրա լուծելու իրենց պատրաստակամությունը:

Հունգարացի գործիչները դատապարտում են կառավարության հանցավոր արարքը

Սեպտեմբեր 01, 2012 | 19:13

Հունգարիայի նախկին վարչապետ Եւ ներկայումս խորհրդարանի անդամ Ֆերենց Գյուրչանին (Ferenc Gyurcsany) այսօր՝ սեպտեմբերի 1-ին քննադատել է Սաֆարովի տեղափոխման կապակցությամբ հունգարական իշխանությունների որոշումը Եւ հայտարարել, որ Ազգային ժողովի առաջին նստաշրջանին (սեպտեմբերի երկրորդ աշխատանային շաբաթ) բացատրություն է պահանջելու կառավարությունից՝ ադրբեջանցի մարդասպանի մասին որոշում կայացնելու վերաբերյալ:

Հունգարական իշխանություններին դատապարտող հայտարարություն է արել նաեւ Դորոգ քաղաքի քաղաքապետ Յանոշ Տիտոմանը (Janos Tittman): Հանքափորների օրվան նվիրված տոնակատարության միջոցառման ժամանակ նա խիստ քննադատել է Հունգարիայի կառավարության որոշումը: Տիտոմանը հայտարարել է, որ հունգարական կառավարությունը պետք է գիտակցեր, որ Սաֆարովը կարող էր միանգամից ազատ արձակվել, Եւ որ նման մարդասպանին հետ վերադարձնելը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ Հունգարիայի համար: Հետագայում նա կապվել է Դորոգ քաղաքի Հայ ինքնավարության ղեկավար Պիրոշկա Ջոտյանի հետ Եւ իր ափսոսանք է հայտնել հունգարական կառավարության կողմից կատարած քայլերի համար:


Ավելի վաղ NEWS.am-ը հաղորդել էր, որ Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը իր հրամանագրով ներում է շնորհել 2004թ. Բուդապեշտում հայ սպա Գուրգեն Մարգարյանին կացնահարած Ռամիլ Մաֆարովին, վերջինիս Հունգարիայից Ադրբեջան տեղափոխվելուց անմիջապես հետո:

Սաֆարովին մեղադրանք էր առաջադրվել Հունգարիայի Քր.օր.-ի 166.2 (Սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում) հոդվածով: Սաֆարովը 2006թ. ապրիլի 13-ին ցմահ ազատազրկման էր դատապարտվել՝ առանց 30 տարի ներման իրավունքի: Հունգարիայի Վերաքննիչ դատարանը 2007թ. փետրվարի 22-ին անփոփոխ էր թողել դատավճիռը:

Օգոստոսի 31-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ Հայաստանը խզում է դիվանագիտական հարաբերությունները Հունգարիայի հետ:

Հունգարացիները ներողություն են խնդրում հայերից

01 Սեպտեմբերի 2012 - 20:37



Ֆեյսբուքում հունգարացիների կողմից Hey Armenia, sorry about our Prime Minister խումբ է ստեղծվել, որտեղ հունգարացիները ներողություն են խնդրում հայերից՝ դժգոհելով Հունգարիայի կառավարության որոշումից:

Հիշեցնենք, որ ըստ Հունգարիայի կառավարության որոշման հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած վիճակում կացնահարած Ռամիլ Մաֆարովը հետ է վերադարձվել

Ադրբեջանին:

Բացի այս խումբը ստեղծվել է նաև Hungarian's love armenians խումբը, որտեղ անգամ հայերենով գրառումներ կան՝ մասնավորապես գրված է՝ ցավում եմ:

Հունգարիայի ընդդիմադիրները բացատրություններ են պահանջում կառավարությունից

01 Սեպտեմբերի 2012 - 21:01

Հունգարական խորհրդարանի ընդդիմադիր խմբակցությունները կառավարությունից պահանջում են ներկայացնել Ռամիլ Մաֆարովի արտահանձնման պատճառները: Նրանցից մի քանիսն անգամ պահանջել են արդարադատության նախարարի հրաժարականը:

Այս կապակցությամբ «Արմենայրես» գործակալությունը տեղեկացել է երեք ընդդիմադիր կուսակցությունների տեսակետներին:

Ընդդիմադիր սոցիալիստական կուսակցության արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, երկրի արտաքին գործերի նախկին նախարար Լասլո Կովաչը նա պահանջել է հրավիրել Հունգարիայի խորհրդարանի արտահերթ նիստ՝ քննարկելու համար ոճրագործ Ռամիլ Մաֆարովին Ադրբեջանին հանձնելու Հունգարիայի կառավարության որոշումը: Այս մասին «Արմենայրես»-ին տեղեկացրել են Հունգարիայի սոցիալիստական կուսակցությունից:

«Օրբանի կառավարության անդամները պատասխանատվություն են կրում Հունգարիայի նկատմամբ կիրառվող միջազգային ճնշման համար», - նշել է Կովաչը՝ ընդգծելով, որ հայ սպային սպանած ադրբեջանցու արտահանձնումն առաջացրել է միջազգային մեծ ճնշում: Կովաչը պահանջում է, որ Հունգարիայի կառավարությունը ներկայացնի Սաֆարովի արտահանձնման պատճառները: Լասլո

Կովաչը, ով վեց տարի շարունակե եղել է Հարկերի և մաքսային միության հարցերով Եվրոպական հանձնակատար, նաև գտնում է, որ արտահանման հիմքում պատճառը կարող է լինել Ադրբեջանի կողմից հունգարական պետական պարտատոմսերի գնումը, այսինքն՝ խոշոր ֆինանսները: Հունգարիայի սոցիալիստական կուսակցությունը խորհրդարանի ամենամեծ ընդդիմադիր խմբակցությունն է՝ 48 պատգամավորով 300 պատգամավորական տեղ ունեցող խորհրդարանում: Հունգարիայի արդարադատության նախարարի հրաժարական և խորհրդարանի արտահերթ նիստի գումարում պահանջել է նաև ընդդիմադիր «Ժողովրդավարական կոալիցիա» կուսակցությունը: Այս ձախ կենտրոնամետ քաղաքական ուժը գլխավորում է երկրի նախկին վարչապետ Ֆերենց Գյուրշասին: Հիմնադրվելով 2010թ-ին որպես Հունգարիայի սոցիալիստական կուսակցության մաս՝ այն 2011թ-ին անջատվել է սոցիալիստական կուսակցությունից՝ ձևավորելով առանձին կուսակցություն և խորհրդարանական խմբակցություն: Ժողովրդավարական կոալիցիան» 300 պատգամավորական տեղ ունեցող հունգարական խորհրդարանում ունի 10 պատգամավոր: Հունգարական LMP ընդդիմադիր կուսակցությունը նա կառավարությանը մեղադրել էր Ադրբեջանի հետ ֆինանսական գործարքի գնալու մեջ: HayNews.am


Հունգարիայի իշխանությունների կողմից Ադրբեջանին հանձնելու և Ադրբեջանի նախագահի որոշմամբ ներման միջոցով ոճրագործին արդարացնելու փաստը: Կատարվածը հերթական դրսևորումն է Ադրբեջանի իշխանությունների որդեգրած հայատյաց քաղաքականության: Ցավոք, ժողովրդավարության և արդարադատության սկզբունքներ դավանող ԵՄ անդամ Հունգարիան՝ ոտնահարելով Եվրոպական արժեհամակարգի բարոյական նորմերը, պախարակելի համագործակցությամբ սատարեց Ադրբեջանում հերոսացված մարդասպանին ազատ արձակելու նենգ ծրագրին, որը հղի է ազգային և կրոնական պատկանելության հողի վրա սպանությունների վտանգով: Մարդկային կյանքը աստվածատուր է, և կանխամտածված մարդասպանության ոճրագործությունը՝ ոճիր մարդկության և Աստծո դեմ: Կոչ ենք ուղղում Հայ Եկեղեցու բոլոր սպասավորներին, աշխարհասփյուռ մեր ժողովրդի հավատավոր զավակներին միասնական ոգով բողոքի իրենց ձայնը հնչեցնելու տեղական հոգեւոր և աշխարհիկ իշխանությունների առջեւ՝ հանուն մեր ազգային իրավունքների պաշտպանության: Դիմում ենք նաև մեր Զույր Եկեղեցիներին և կրոնական բոլոր կազմակերպություններին՝ դատապարտելու այս իրողությունը և իրենց ձայնը բարձրացնելու հանուն արդարության և ճշմարտության: Գերագույն հոգեւոր խորհուրդը նաև խնդրել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին այս առնչությամբ դիմելու կրոնապետներին, ինչպես նաև առանձին պետությունների, միջազգային կազմակերպությունների և կրոնական ու հասարակական կառույցների ղեկավարներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է Հունգարիայի քայլը



Սեպտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի է ունեցել Գերագույն հոգեւոր խորհրդի արտահերթ ժողով: Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ Գերագույն հոգեւոր խորհուրդը վրդովմունքով և մտահոգությամբ անդրադարձել է Բուդապեշտում 2004 թ. ՀՀ ՉՈՒ սպա Գուրգեն Մարգարյանին ազգային ատելության հողի վրա ընած վիճակում դաժանաբար սպանած Ադրբեջանի ՉՈՒ սպա Ռամիլ Սաֆարովի՝ Հունգարիայի իշխանությունների կողմից արտահանման և Ադրբեջանի նախագահի կողմից նրան ներում շնորհելու իրողությանը և հանդես եկել հետեւյալ հայտարարությամբ. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին խստիվ դատապարտում է մարդասպան Ռամիլ Սաֆարովի

Սփյուռքի նախարարը ՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ քննարկել է սիրիահայերի հարցը



Օգոստոս 28, 2012 | 20:32
Օգոստոսի 28-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հենրիեթ Արենսին: Սփյուռքի նախարարության լրատվական ծառայությունից հայտնում են, որ հանդիպման առանցքում էին Հայաստան ժամանած սիրիահայերի, և հատկապես՝ երեխաների հիմնահարցերը: Նախարարի ներկայացմամբ սիրիահայերի հիմնախնդիրները, ՀՀ նախագահ Սերժ

Սարգսյանի հանձնարարությամբ, գտնվում են ՀՀ կառավարության անընդմեջ հսկողության եւ ուշադրության ներքո:

Նախարարը խոսել է արդեն իսկ իրականացված եւ ընթացքում գտնվող ծրագրերի, սիրիահայերին պետական մակարդակով տրվող արտոնությունների եւ աջակցության մասին: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Յենրիեթ Արենսը հիմնադրամի անունից գործակցության եւ աջակցության պատրաստակամություն է հայտնել, հասկապես, սիրիահայ երեխաների հետ տարվող աշխատանքներում:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է սիրիահայերի կրթական, առողջապահական, սոցիալական հիմնախնդիրների մի ողջ շարք, քննարկվել է հնարավոր գործակցության եզրերի լայն շրջանակ:

Հիմնադրամի ներկայացուցիչ Յենրիեթ Արենսը նշել է, որ ՀՀ սփյուռքի նախարարի հետ հանդիպման եւ գրույցի արդյունքում ստացված տեղեկատվությունը կներկայացվի ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ողջ կառույցին, այնուհետեւ, կսահմանվեն համագործակցության հնարավոր տարբերակները եւ ծրագրերը:

ՀՀ սփյուռքի նախարար Յ. Հակոբյանը հույս է հայտնել, որ ձեռք կբերվի արդյունավետ համագործակցության տանող պայմանավորվածություն, որի յուրաքանչյուր ծրագիրը կգործի ի նպաստ սիրիահայ երեխաներին բարեկեցության:

Արեւմտյան Հայաստան

Սիրիահայությունը մեր աջակցության կարիքն ունի եւ մենք նրանց կողքին ենք

Շաբաթ օրը (04/08/2012), ժամը 13-ին, տեղի ունեցավ պատմական հանդիպում՝ դեմոկրատական միության կուսակցության նախագահ Մոհամեդ Մալեհ Մուսլիմի, Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահ Արմենակ Աբրահամյանի եւ Սիրիայի քրդերի բարձրաստիճան ներկայացուցիչների միջեւ:

Ժողովի վերջում պարոն Արմենակ Աբրահամյանը որոշեց մեկնել Սիրիա: Օրվա վերջում պարոն Արմենակ Աբրահամյանը հանդիպեց Սիրիայի Քրդերի Ազգային Խորհրդի նախագահ Աբդուլ Հակիմ Բաշարին, որպեսզի արտահայտի իր մտադրություններն ու մտահոգությունը: Այս ամենից հետո պետք էր գնալ եւ տեղում սեփական աչքերով տեսնել ստեղծված իրավիճակը: Սիրիայում լինելը հնարավորություն տվեց տեղում ապրել եւ զգալ քուրդ - հայ բնակչության անմոռանալի, եզակի փորձառությունը, որ ապրել են նրանք Հայոց ցեղասպանության ժամանակ:

<<Մենք նույնն ենք, մենք նույն արյունն ունենք>>

Այս տարածաշրջանի բնակիչների առավել մեծ մասը Հայոց ցեղասպանությունից փրկվածներն են: Այսօր քրդերն ու հայերը ասում են, որ նրանք հայամետ են եւ նշում են <<Մենք նույնն ենք, ունենք նույն արյունը>>: Այս ընտանիքները դարձել են մահմեդական եւ չեն

խոսում իրենց նախնիների լեզվով՝ պնդելով, որ իրենք հայկական ծագում ունեն:

Արմենակ Աբրահամյանը ընտանիքներին վստահեցրեց, որ Արեւմտյան Հայաստանի՝ ներառյալ Կիլիկյան Հայաստանի հաստատությունների կողմից տարածաշրջանում բնակվող եւ ոչ մի ժողովրդի նկատմամբ խտրականություն չի լինելու:

Շատերը ցանկանում են վերականգնել իրենց ծնողների հավատը, հայերեն սովորել: Նրանք հույս ունեն, որ հայ եւ քուրդ ժողովուրդները միասին կապրեն խաղաղության մեջ եւ եղբայրաբար: Բոլոր երիտասարդները զինված են, պատրաստ պաշտպանելու իրենց գյուղը, քաղաքը, իրենց բնակավայրը, ընտանիքները, ժողովուրդը:

Այսօրվա վիճակը նկատի առնելով, Պարոն Մալեհ Մուսլիմը եւ Պարոն Աբրահամյանը մտադրվեցին յուրաքանչյուր քաղաքում կազմակերպել Ժողովուրդների մասնակցության մի կառույց, որտեղ յուրաքանչյուր տարածքից կլինեն տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ (քրդեր, արաբներ, հայեր, ասորիներ եւ մյուսներ):

Քրդերը խոստացել են պաշտպանել, եւ աջակցել սիրիահայությանը, բայց Պրն. Աբրահամյանը ցանկանում է, որ Սիրիայի հայերն էլ ինքնապաշտպանության միջոցներ ձեռնարկեն: Սիրիայում քրդական կազմակերպությունների առավել ազդեցիկ նախագահի՝ Պարոն Մալեհ Մուսլիմի հետ հանդիպման ընթացքում պարոն Արմենակ Աբրահամյանը նկատեց, որ այն քաղաքներում, որոնք վերահսկվում են քրդերի կողմից՝ բռնություններ չկան, սակայն Հալեպում, ուր կա մոտ 60.000-ից 80.000 հայ բնակչություն, ամեն օր բռնության ենթարկվելու վտանգ կա:

Այժմյան տվյալներով, քրդերը Հալեպում երկու շրջաններ են վերահսկում, որոնք մոտ են հայկական թաղամասերին եւ գտնվում են քաղաքի կենտրոնում: (Հիշեցում. Ըստ 2011 թվականի վիճակագրության պաշտոնական տվյալների, Սիրիան ունի 22 մլն բնակիչ, 74% շիա մահմեդականներ, 16% սուննի մահմեդականներ, 15% քրդեր, 11% ալեւի, 3% դրուզ եւ 10%-ը քրիստոնյաներ՝ տարբեր եկեղեցիների: Հայերը ներկայացնում են մոտ 3%-ը, այսինքն՝ Սիրիայի բնակչության մոտ 300.000 ը հայեր են:

<http://www.minorityrights.org/5266/syria/syria-overview.html>

Այսօր քրդերը պատրաստ են աջակցելու հայկական թաղամասերի պաշտպանությանը Հալեպում, սակայն առանց մուտք գործելու այնտեղ: Մարդկանց եւ գույքի պաշտպանությունը կլինի հայերի կողմից, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի հովանու ներքո, շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ եւ համաձայնության դեպքում, կորոշվի իրադարձությունների զարգացման ընթացքին զուգահեռ: Սիրիայի հայերի մեծամասնությունը տիրապետում է քրդերենին եւ արաբերենին, դա համեմատաբար

հեշտացնում է նրանց շփումը ընդհանուր կառույցներում: Ինչպես նաև պետք է նշել, որ 2012 թվականի օգոստոսի 9-ին հայերը ինքնակառավարման եւ ինքնապաշտպանության կառույցներին մասնակցելու պատրաստակամություն են հայտնել՝ պետության պաշտպանության բացակայության պաճառով, կառույցներ, որ ձեռավորվել են Կորան քաղաքում: Աշխարհով մեկ սփռված հայերի համար առաջնահերթություն է ծագել աջակցելու Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդին, որի առաքելությունն է հաշվի առնել եւ հիմնվել Սիրիայի հայ ժողովրդի կամքի եւ ներուժի վրա: (<http://www.western-armenia.eu/>) Հորդանանը 700 միլիոն դոլլար է պահանջում հնարավոր 240.000 փախստականներ իր տարածքում ընդունելուհամար, միաժամանակ Սիրիայում 300.000 հայեր դեռ ապրում են ուրբակոծությունների ներքո:

http://www.lexpress.fr/actualite/monde/proche-orient/la-jordanie-reclame-700-millions-de-dollars-pour-accueillir-les-refugies-syriens_1155466.html

Սիրիայի հայերը հնարավորինս արագ մեր օգնության կարիքն ունեն տեղում՝ -դպրոցները պահպանելու համար, -շտապ օգնության կենտրոններ ստեղծելու, -Տրամադրել անհրաժեշտ սննդային աջակցություն, http://www.liberation.fr/monde/2012/09/04/syrie-les-quartiers-rebelles-d-alep-souffrent-de-penurie-alimentaire_843800

-հոգեբանական օժանդակություն մատուցելու եւ փախստականների ժամանակավոր կացարաններ ապահովելու:

ՄԱՄՆԱԿՑԵՆՔ, ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԻՆԵՐԻՆ ուղարկելով Ձեր օժանդակությունը հետեւյալ CNA - BP 6192224 BAGNEUX CEDEX – FRANCE հասցեով:

<http://www.western-armenia.eu/soutien.htm>

**Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի
Լրատվական բաժին:
04.09.2012**

Աղթամարի Սուրբ Խաչում պատարագն իրականացվել է հայաստանցիների ակտիվ մասնակցությամբ. ռեպորտաժ Վանից

Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում սեպտեմբերի 9-ին, Հայոց ցեղասպանությունից 97 տարի անց մատուցվեց 3-րդ պատարագը Ինչպես Վանից տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը, Հայ առաքելական եկեղեցու արեւելյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Խաժսակ Պարսամյանի գլխավորությամբ պատարագը սկսվել է 11:00-ին: Պատարագի ժամանակ արդթել են նաև Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների եւ Նախորդ տարվա Վանի ուժգին երկրաշարժի հետեւանքով զոհվածների համար:

Նախորդ տարիների համեմատ պատարագին մասնակցողների թիվը զգալի պակաս էր, սակայն այս տարի Աղթամարում էին գտնվում ավելի շատ հայաստանցիներ քան Նախորդ երկու տարիներին: Եթե առաջին տարում պատարագին մասնակցել էր մոտ 50 հայաստանցի, այս տարի պատարագին մասնակցող հայաստանցիների թիվն անցնում էր 300-ը: Այս տարի ԱՄՆ-ից եւս հայերի մեծ խումբ էր եկել՝ մոտ 70 հոգի: Հետաքրքիր էր նաև, որ պատարագին ժամանել էին նաև հայեր Դիարբեքիից, Մուշից եւ Սասունից: Պատարագի շատ մասնակիցներ հուզվել էին եւ չէին կարողանում թաքցնել արցունքները: Պատարագից հետո եկեղեցում Հայաստանից ժամանած քահանայի ղեկավարությամբ տեղի ունեցավ երկու հայաստանցի երեխաների մկրտություն:



Սեպտեմբեր 10, 2012

Մասնակիցների թվում էր նաև հայկական «Ակունք» համույթը եւ «Վան Նախագիծը», որոնք պատարագից մեկ օր առաջ Վանում հրաշալի համերգ էին կազմակերպել շահելով հանդիսատեսների բուռն ծափահարությունները:

Պատարագի ավարտից հետո «Ակունք»-ը ելույթներով հանդես եկավ՝ առաջ բերելով կղզում գտնվողների մեծ հետաքրքրությունը: Ներկաները մեծ ոգեւորությամբ հետեւում էին համերգին եւ վերջում նկարվեցին «Ակունք»-ի մասնակիցների հետ հայկական եռագույն դրոշներով, որին անմիջապես արձագանքեցին թուրք լրագրողները արագ ֆիքսելով դրոշներով կադրերը:

Պոլստ հայոց պատրիարքարանի որոշմամբ՝ այս տարվա պատարագի ժամանակ վաճառված մոմերից ստացված եկամուտը հանձնվել է Վանի Նահանգապետարանի հատուկ հաշվեհամարին՝ օգնություն ցուցաբերելու Վանի երկրաշարժից տուժածներին:

Պատարագի անվտանգ անցկացման համար թուրքական իշխանությունները Աղթամար կղզի էին ուղարկել մոտ 200 ոստիկանի, որոնց մի մասը քաղաքացիական հագուստով էր: Կղզում հերթապահության էր կանգնած Առողջապահության Նախարարության ուղղաթիռը, իսկ օդից կղզում գտնվողների անվտանգությունը ապահովում էր ոստիկանության հատուկ ուղղաթիռը: Ափից միջուկ կղզի ընկած հատվածում մշտական հերթապահության մեջ էին փրկարար ջոկատների մոտորանավակները:

Սուրբ Խաչի պատարագին մասնակցում էին Վանի փոխքաղաքապետ Սաբրի Աբին, (քաղաքապետը գտնվում է կալանքի տակ) Վանի փոխնահանգապետ Աթայ Ուսլուն, Գեւաշի քաղաքապետ Նազմի Սեգերը, Գեւաշի քայմաբաժնի Յուսուֆ Գյունին, Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր, բողոքական «Խաղաղություն եւ

ժողովրդավարություն» կուսակցության անդամ Նազմի Գյուրը եւ այլք:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին 915-921 թվականներին կառուցվել է Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունու պատվերով՝ ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Մանվելի կողմից: Տաճարի արտաքին պատերը զարդարված են 6 հորիզոնական շարք կազմող զարդաքանդակներով, որոնք չեն խախտում պատերի հարթությունը: Չարդաքանդակները ստեղծելիս Մանվելը հաշվի է առել հնարավոր դիտանկյունները և տարբեր ժամերի լուսավորությունը: Պատերից մեկի վրա Գագիկ Արծրունու դիմաքանդակն է, կողքին՝ ողջ հասակով Քրիստոսը, որին արթան պարզում է եկեղեցու մանրակերտը:

Սասունի Մարութա սարի եկեղեցու ավերման կապակցությամբ թուրքական դատախազությունը հետաքննություն է սկսել

Օգոստոս 27, 2012 | 12:24

Թուրքական դատախազությունը հետաքննություն է սկսել Սասունի Մարութա լեռան գագաթին գտնվող հայկական Սուրբ Աստվածածին (Բարձր Աստվածածին) եկեղեցու մի հատվածի ավերման կապակցությամբ:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Haberler-ը, Սասունի քայմաքամ Բահադըր Յորուքը հայտնել է, որ Մարութա լեռան գագաթին գտնվող Բարձր Աստվածածին եկեղեցու ավերման հետ կապված տեղում ուսումնասիրություններ է կատարել ժանդարմերիան եւ նահանգային վշակույթի վարչության հանձնաժողովը: «Սպասում ենք ուսումնասիրությունների եզրակացություններին, եւ կանենք ինչ անհրաժեշտ է», -ասել է քայմաքամը՝ շեշտելով, որ դեպքի կապակցությամբ դատաձազությունն արդեն հետաքննություն է սկսել:

Նշենք, որ Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Սասունի ամենաբարձր Մարութա լեռան գագաթին (2973 մ) գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու տանիքի եւ մուտքի մի հատվածը քանդվել է անհայտ չարագործների կողմից:

Այս տարվա հուլիս 28-ի երեկոյան Սասունից, Հայաստանից, Ստամբուլից եւ աշխարհի տարբեր երկրներից ժամանած մոտ [100 հայեր ուխտ են կատարել Մարութա սար՝ հաջող առավոտյան հասնելով Մարութա Սուրբ Աստվածածին](#):

[NEWS.am](#)-ի թղթակիցը եւս մասնակցել է Մարութա սարի ուխտագնացությանը եւ ներկայացրել ուխտագնացության ֆոտոռեպորտաժը:

Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում 97 տարի անց կրկին համերգ է տեղի ունեցել

Սեպտեմբեր 11, 2012

Մերձավոր Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցում Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցում Ցեղասպանությունից 97 տարի անց կրկին համերգ է տեղի ունեցել:

Ինչպես տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը Դիարբեքիից, Սուրբ Կիրակոս եկեղեցում համերգով է հանդես եկել ստամբուլահայ, ներկայում Կանադայում ապրող հայտնի դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը:



Համերգին մասնակցել են ԱՄՆ-ից ժամանած մոտ 80 հայեր՝ Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ արեւելյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Խաժակ Պարսամյանի գլխավորությամբ, ստամբուլահայեր՝ Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը, հայաստանցիների փոքր խումբ, Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայրեմիլը, Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Ալթան Թանը եւ այլ պաշտոնյաներ:

Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայրեմիլը ողջույնի խոսքով դիմել է քաղաք ժամանած հայերին՝ նշելով, թե Դիարբեքիը ինչքան էլ որ մահմեդականների քաղաքն է, այնքան էլ հայերի քաղաքն է: Բայրեմիլը կրկին խնդրել է Դիարբեքիից հեռացած հայերի ժառանգներին վերադառնալ իրենց հողերը:

Ռաֆֆի Պետրոսյանն իր խոսքում հիշեցրել է, որ մինչև 1915-ը Սուրբ Կիրակոսում ամեն ամիս համերգ է տեղի ունեցել, իսկ 1915-ին Դիարբեքիի նահանգապետը եկեղեցուց ի թիվս այլ իրերի գողացել է իր տուն է տարել նաեւ դաշնամուրը:

Նշենք, որ Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերոնորոգումն ավարտվել է նախորդ տարի, իսկ այս տարի կավարտվի եկեղեցական համալիրի ամբողջական վերանորոգումը եւ նոյեմբերի 4-ի պատարագը տեղի կունենա ամբողջովին վերանորոգված համալիրում:

Թուրքական ապատեղեկատվություն՝ Անիի եկեղեցիների շուրջ

Հայոց Բագրատունի թագավորական դինաստիայի օրոք Հայաստանի մայրաքաղաք հանդիսացած Անիի վերաբերյալ թուրքական ապատեղեկատվությունները շարունակվում են տարածվել: Այդ ամենի արդյունքում նույնիսկ սոցկայքերում որոշ հայ օգտատերեր թուրքական իշխանություններին գովերգող մեկնաբանություններ են թողել:



խոսքը վերաբերվում է օրեր առաջ թուրքական մամուլում հայտնված «Անիի եկեղեցիները վերանորոգվում են» կամ «Անիի եկեղեցիների վերանորոգումը կավարտվի մինչև սեպտեմբերի 15-ը» հրապարակումներին: Փաստորեն՝ թուրքական քարոզչությանը շատ հայեր են միամտաբար հավատացել՝ չմտածելով, թե ինչպես կարող է հազար ու մեկ եկեղեցիների քաղաք անունը կրող Անիի եկեղեցիները վերանորոգվել 2 ամսում:

Իսկ ի՞նչ է կատարվում իրականում Անիում: NEWS.am-ի թղթակիցը շրջեց Անիում, խոսեց Անիում աշխատանքներ իրականացնող խմբի անդամների հետ: Եւ արդյունքում Անիում պարզապես ամրացվում է Անիի Փրկչի (Ամենափրկիչ) եկեղեցին, որի աշխատանքները մեկնարկել են հուլիսին եւ նախատեսվում են ավարտել մինչև սեպտեմբերի 15-ը: Փրկչի եկեղեցու ուղիղ կեսը փլված է եւ եթե նույնիսկ թուրքերը շատ ցանկանային, այն 2 ամսում չեն կարող վերականգնել: Ի միջայլոց, Փրկչի եկեղեցու վերանորոգումն էլ թուրքական իշխանությունների ոչ նախաձեռնության ոչ էլ ֆինանսական օժանդակությամբ է իրականացվում:

Դեռեւ 2010 թվականին ԱՄՆ պետքարտուղարության կազմում գործող «Մշակույթային պահպանության ամերիկյան դեսպանների հիմնադրամ»-ի կողմից 625 հազար դոլար էր հատկացվել Փրկչի եկեղեցու վերականգնման համար եւ միայն 2 տարի անց միջազգային տարբեր կառույցների ճնշման տակ Թուրքիայում սկսվեց Փրկչի եկեղեցու ամրացման աշխատանքները: Եկեղեցու ամրացման աշխատանքները ֆինանսավորվում են Թուրքիայում ԱՄՆ դեսպանատան եւ Համաշխարհային հուշարձանների հիմնադրամների կողմից: Ամրացման աշխատանքները իրականացնող թուրքական կողմը աշխատանքներում չի ընդգրկել որեւէ հայ մասնագետի՝ հրավիրելով թուրքական մի համալսարանից ոմն դոցենտի:

Ավելորդ չէ հիշեցնել, որ Անիին պետական մակարդակով թուրքացվում է: Անիի ոչ մի հուշարձանի կամ շինության դիմաց փակցված ցուցակակներում չկա «հայ» կամ «Հայաստան» բառը, չնայած, որ Անին եղել է Հայաստանի մայրաքաղաք եւ այդ շինություններն էլ հայկական են: Ավելին, վերջին շրջանում տեղեկաց է նկատվել Անին անվանել «Անը», որը թուրքերեն բառ է եւ նշանակում է պահ, ակնթաղթ: Սա նպատակ ունի Անի անվանումը եւս թուրքացնել՝ ցույց տալու համար, որ այն թուրքական է: Անիի թուրքացման շուրջ ավելի վաղ հայտարարությամբ էր հանդես եկել Կարսի նախկին ճարտարապետ, Կովկասյան մշակույթների հետազոտական կենտրոնի ղեկավար Ալի Իսան Ալընաքը:

«Թուրքիան վերջին երկու տարում փորձում է Անին թուրքականացնել՝ հենվելով ոչ գիտական հիմքերի վրա՝

այն անվանելով Անը (թուրքերեն՝ պահ, ակնթաղթ): Պետությունը սրանով իրականացնում է ժողովուրդների միջև խաղաղությանը չնպաստող եւ ապատեղեկատվություն տարածող թուրքականության քաղաքականություն: Ամբողջ աշխարհը Անի ասելով հասկանում է հայկական քաղաք: Իսկ Թուրքիայի մշակույթի նախարարությունը փորձում է այն վերափոխել Անը, որպեսզի «հայ» բառը չհիշատակվի», -նշել է Ալի Իսան Ալընաքը:

Չավեշտալին այն է, որ Անիի եկեղեցիների իբր վերանորոգման մասին տեղեկություններից օրեր անց Թուրքիայում տեղի ունեցավ հերթական վայրագությունը: Սասունի Մարութա լեռան գագաթին գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու տանիքի եւ մուտքի մի մասն ավերվել է անհայտ չարագործների կողմից:

Արթուր Հակոբյան

Թուրքերից ստացած եկեղեցին հայկական հիմնադրամն էլ չի կարողանում վերանորոգել

Օգոստոս 22, 2012 Թուրքիայի հարավային Մարդին նահանգի Զըզըլթեփեյի շրջանում գտնվող պատմական Սուրբ Գեւորգ հայկական եկեղեցին հայտնվել է բախտի քմահաճույքին:

Թուրքական Evrensel.net կայքը գրում է, որ թուրքական իշխանությունների կողմից եկեղեցին Մարդինի կաթոլիկ հայկական եկեղեցու հիմնադրամին հանձնելուց հետո եկեղեցու ճակատագիրը կրկին անորոշ է մնում, քանի որ հիմնադրամը եւս ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողանում վերանորոգել այն:

Հայկական պատմական եկեղեցին, որի կառուցման տարեթիվը հայտնի չէ, երկար ժամանակ որպես գյուղատնտեսական թունաքիմիկատների պահեստ է օգտագործվել, մինչև որ այն հայտնաբերվել է թուրք հայտնի իրավապաշտպան Ռազըվի Չարաքլուի կողմից: Պետության կողմից 2004 թվականին Սուրբ Գեւորգ եկեղեցին վերցվել էր հսկողության տակ եւ որոշում կայացվել՝ վերանորոգել այն: Սակայն նշանակված պահակը «հայերի գանձերը» գտնելու նպատակով մոտ 7 մետր փոս է փորել եկեղեցու ներսում, որի հետեւանքով դեռեւս կանգուն մնացած տանիքը փլվել է: Այս դեպքից հետո եկեղեցու պահակին ձերբակալել են: Եկեղեցու տանիքը փլուզվելուց հետո վերանորոգման աշխատանքները դադարեցվել են եւ երկար ժամանակ չանցած իշխանությունները եկեղեցին հանձնել են Մարդինի կաթոլիկ հայկական եկեղեցու հիմնադրամին՝ շեշտելով. «Կարող եք վերանորոգել»:

Թուրքիայում Սասունի հայերի միությունը դիմում է ներկայացրել՝ կոչ անելով պահպանել հայկական եկեղեցիները

Օգոստոս 28, 2012

Թուրքիայում Սասունի հայերի միության նախագահ Ազիզ Դադըն Մարութա սարի գագաթին գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու դեմ իրականացված ոտնձգությունից հետո դիմում է ներկայացրել Բաթմանի (Սասուն) նահանգապետարան՝ կոչ անելով պահպանության տակ առնել հայկական եկեղեցիները:

Ինչպես տեղեկացնում է թուրքական IHA լրատվական գործակալությունը, Ազիզ Դադըն իր դիմումում նշել է, որ վերջին շրջանում որոշ սադիիզների կողմից Բաթմանի նահանգում գտնվող հայկական եկեղեցիները հարձակման են ենթարկվում: «Վերջին դեպքը՝ Սասունի Մարութ սարի Սուրբ Աստվածածին եկեղեցու ավերումն էր: Անհրաժեշտ է, որ Սասունի շրջանի Մեշելի գյուղի հետևում գտնվող եւ 365 սենյակ ունեցող Պետրոս Առաքյալի վանքը եւս պահպանվի: Ավելի վաղ դիմում էին ներկայացրել նահանգապետարան՝ պահպանության տակ ամռելու Սասունի Ռեշիփի գյուղի հայկական եկեղեցու, Քոզլուքի շրջանի Աբջաբլը գյուղում գտնվող Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցիները: Մենք չենք հավատում, որ եկեղեցիները քանդվում են գանձ որոնողների կողմից: Մենք որպես համայնք տուժվել ենք, չունենք աղոթատեղի: Այդ բոլոր եկեղեցիները գրանցված են: Լոզանի համաձայնագրի 42-րդ հոդվածի 3 կետի համաձայն՝ թուրքական կառավարությունը ազգային փոքրամասնություններին պատկանող եկեղեցիներն ու հոգևոր մյուս կառույցները պետք է պահպանի: Անհրաժեշտ է, որ Թուրքիայի հանրապետությունը կատարի համաձայնագրի դրույթները»,- ասել է Ազիզ Դադըն:

Թուրքիան պետականորեն հովանավորում է Մրենի տաճարի կործանումը

Օգոստոս 30, 2012
«Վարձքի» յուրաքանչյուր համար ընդգրկում է այնպիսի նյութ, որը երբեք արժարժված չի եղել: Այս մասին այսօր՝ օգոստոսի 30-ին հրավիրված ասուլիսին ասաց հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող հիմնադրամի նախագահ Սամվել Կարապետյանը:
Նրա խոսքով, «Վարձք»-ի 7-րդ համարում առանցքային է 2 նյութ: Նախ տիեզերքից կատրված լուսանկարն է Վերին եւ Ներքին Ազուլիսներում, որոնք արդեն մշակութային է արվել:
Իսկ Զանդեսի հաջորդ նյութը նվիրված է Մրենի տաճարին, որը 7-րդ դարի եկեղեցի է եւ գտնվում է Հայաստանի սահմանին շատ մոտ, Ախուրյան գետի մոտակայքում:
«Դեռեւս 2006թ-ից եկեղեցում ամբողջ հարավային ճակատը փլվել էր: Մրենի տաճար այցելել չի կարելի, քանի որ կա զինվորական պահակակետ, որ ոչ ոք չայցելի: Մինչդեռ եկեղեցում վիհեր են փորել եւ ակնհայտ է՝ գանձախույզները կամ ինչ-որ մարդիկ երկար ժամանակ աշխատել են այդտեղ: Եւ ստացվում է, որ այդ կերպ տաճարի քանդումը իրականացնողների նկատմամբ աջք են փակել: Սա ցույց է տալիս, որ Մրենի տաճարի կործանումը պետականորեն հովանավորված է: Թուրքիայի կառավարությունը զուռնա-դիուլով աշխարհի ակնաչն է գցում, որ վերականգնել է Աղթամարի վանքը, բայց կործանում է Մրենի վանքը»,- ահազանգեց Սամվել Կարապետյանը: Սամվել Կարապետյանի ահազանգեց նաեւ, որ Հայաստանում կան վերականգնված հուշարձաններ, որ տեսնելիս ասել են՝ երանի մոտիկ չգայի: Օրինակ Արցախում Հադրութի շրջանի «Գտիչ» վանքի շինարարական աշխատանքները, որը բարեբախտաբար դադարեցրել են եւ վերականգնումը հանձնել մեկ այլ շինարարական կազմակերպության:

Կարսի Առաքելոց բողոքներից հետո սկսել են բացել զբոսաշրջիկների առաջ

Օգոստոս 28, 2012
Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Հայաստանի նախկին մայրաքաղաքներից Կարս քաղաքում գտնվող Առաքելոց եկեղեցին զբոսաշրջիկների բողոքներից հետո սկսել է ավելի շուտ-շուտ բացվել:
Ինչպես Կարսից տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը, մզկիթի վերածված հայկական եկեղեցին բաց էր լինում միայն նամագի ժամերին, սակայն վերջին շրջանում տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկների բողոքները թուրքական մամուլում հայտնվելուց հետո դրույթները փոքր ինչ փոխվել է:
NEWS.am-ի թղթակիցը Կարսում նկատել է, որ եկեղեցու մոտ հավաքված զբոսաշրջիկներ տեսնող երեխաները արագ վազում եւ կանչում են «մզկիթի» իմամին, ով գալիս եւ դուռը բացում է զբոսաշրջիկների առաջ: Իսկ երեխաները մոտենում են զբոսաշրջիկներին եւ դուռը բացելու համար «աշխատանք» կատարելու դիմաց գումար ուզում: Չբոսաշրջիկներից շատերը չեն ընդդիմանում եւ երեխաներին մանրադրամներ են տալիս:



Հայոց Բագրատունիների օրոք, 10-րդ դարում կառուցված Կարսի առաքելոց եկեղեցին պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ եկեղեցուց վերածվել է մզկիթի: Վերջին վերանորոգումից հետո էլ խոսակցություն կար, թե այն կարող է դառնալ եկեղեցի կամ թանգարան, սակայն այն ի վերջո, վերածվեց մզկիթի, չնայած պատերի վրա առկա են քանդակված խաչեր եւ առաքյալների պատկերները:
2 տարի առաջ, երբ Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում թույլատրվեց պատարագ իրականացնել, Կարս ժամանեցին մեծ թվով զբոսաշրջիկներ, ովքեր այնտեղից մեկնեցին Վան: Չբոսաշրջիկների նման հոսք տեսած Կարսի տուրիզմի ներկայացուցիչները փորձել էին դիմել Անկարային՝ Կարսի Առաքելոցում եւս տարին մեկ անգամ պատարագ իրականացնելու թույլտվություն ստանալ, սակայն կտրուկ մերժում էին ստացել:

Միջազգային

Sabah. Նոր պատերազմի դեպքում Թուրքիան կվերանա



Օգոստոս 24, 2012 Նախկինում ճգնաժամի հարցերով անհանգստացողները, կամ աշխատավարձերով հետաքրքրվողները այսօր հրճվում են. «Դուք լրագրող եք, դուք չեք կարող իմանալ կլինի՞ պատերազմ, թե ոչ» : Այս մասին գրում է թուրքական Sabah թերթի վերլուծաբան Էնգին Արդիչը:

«Այս հարցին ես պատասխան հարց եմ տալիս. «Ինչ պատերազմի մասին է խոսքը՝Թուրքիայի եւ Սիրիայի, թե՞ Իսրայելի եւ Իրանի միջև, կամ էլ թե երրորդ համաշխարհային պատերազմի»:

Նշանավոր պատմաբան Էրիկ Զոբսթաունը մի քանի տարի առաջ ասել է, որ «Բոլոր պայմանները ստեղծվել են համաշխարհային նոր պատերազմի համար»...Թեև ոչ այդքան դաժան, որքան 1929 թ-ին, սակայն մենք կթեւակոխենք կապիտալիզմի նոր ճգնաժամի մեջ...: Դժվարին կացության մեջ գտնվող երկրներում չի դադարում ֆաշիզմը...: Նոր ուժ են հավաքում Մերձավոր Արեւելքում տիրող անկայությունները...:

Ես չեմ վախենում թուրք-սիրիական պատերազմից: Ասաղը այսպես, թե այնպես, արդեն տապալվել է: Նա առավել դաժան դիմադրություն է ցուցաբերում, քան Զադաֆին կամ Զոսնին, սակայն նրան անխուսափելիորեն սպառվում է պատմության աղբարկղը: Թուրքական բանակը կհաղթի Սիրիային, այս հաղթանակը մեզ համար մի քանի հարյուր գոհ, ճգնաժամ կարծես, մեր հայրենիքը շատ բան կկորցնի, բայց մենք չեն կործանվի:

Ինչ վերաբերում է Իսրայելի եւ Իրանի պատերազմին, ապա կատակը մեծ արագությամբ հրդեհի կվերածվի եւ մենք կհայտնվենք ամերիկյան եւ ռուսական մարտերի կրակի ներքո...: Եվ կկանգնենք «որեւ մեկի կողմը անցնելու անհրաժեշտության» առջև:

Ինտերնետում թեզիսներ են հայտնվել այն մասին, որ «Իսրայելը Իրանին հարված կհասցնի սեպտեմբերի կեսերին» հաստատելով այն որոշ մանրամասնություններով: Սակայն, երբ արդեն Իսրայելի «պաշտոնական դեմքերն» են սկսում նկարագրել նման ծրագրեր, ապա հարցը «դադարում է կատակային լինել»... այնուհանդերձ, գրոհի դեպքում, «բարոյական նախապատվությունը» կլինի Իրանի կողմում:

Իսրայելը ենթադրում է, որ «Պատերազմը կտևի 30 օր»: Նման կերպ են մտածել նաեւ 1914 թ-ին...: Օգոստոսին ասում էին, որ «Միևնէտ Սուրբ ծնունդ կավարտվի», - այսինքն պատերազմը չպետք է հատեր 1915 թ-ի սահմանը... միևնջե պատերազմը ավարտվել է միայն 1918 թ-ի նոյեմբերին: Իսկ նրա հետ իրենց գոյությունն են ավարտել երեք միապետություններ՝ Գերմանականը, Ավստրիականը եւ Օսմանյանը:

Ենթադրություններ են հնչել այն մասին, որ երրորդ աշխարհամարտը շատ կարճ կտևի (չորրորդի համեմատ, որի ժամանակ, ըստ Էյնշտեյնի, ուժի մեջ կմտնեն «բարեր եւ մահակներ») ... Իսկ եթե ո՞չ:

Կամ թե կողմերը, շատ լավ հասկանալով, որ միջուկային կոիվները աշխարհի վերջին կհանգեցնեն, Նորից կանցնեն «պայմանական» զենքի՞ն... Առաջինը՝ 4 տարի, երկրորդը՝ 5 տարի, երրորդը կտևի 8, 10 տարի՞...:

Արդյոք այս դեպքում սոցիալիզմ կհաստատվի՞, հազիվ թե: Սակայն Թուրքիան կվերանա: Մենք բոլորս էլ շատ լավ գիտենք, որ Թուրքիան չի դիմանա: Եւ կլինեն տասնյակ հազարավոր զոհեր: Մենք ոնց կանք, այդպես էլ կապրենք, միայն թե երիտասարդ սերունդն է մեղք:

Պատմությունը չի ների այս խաղասեղանի շուրջ դրույթներ կատարողներին, ինչպես որ մենք չենք ներել Էսվերին եւ նրա «մեղսակիցներին»:

Մի գուցե լիբերալ ինտելեգենցիան, ով խոսում է «Յեղաշրջման մասին, որը մեծ ցավ կպարգեւի մեզ», ենթադրում է համաշխարհային պատերազմ, որի համար առիթ կարող է հանդիսանալ Իսրայել-Իրան հակամարտությունը: Կամ էլ «տեղական» մակարդակի այնպիսի մի դեպք, ինչպիսին Թուրքիայի պարտությունն ու տարածքային կորուստներն են եւ Զուրիխտանի հիմնումը»,-գրում է վերլուծաբանը:

ԱՄՆ կոնգրեսականները դատապարտում են Սաֆարովի ազատ արձակման որոշումը

01 Սեպտեմբերի 2012 - 11:25

ԱՄՆ Կոնգրեսի անդամները իրենց մտահոգությունն են արտահայտել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի այն որոշման հետ կապված, որով Ադրբեջանին հանձնված մարդասպանին անմիջապես ներում է շնորհվել:

Կոնգրեսական Ֆրանկ Փալլոնը նշել է. «Ես վրդովված եմ Ադրբեջանի կառավարության անշրջահայաց գործողություններից: Չափազանց արտասովոր է, որ Ադրբեջանի նախագահը ազատ է արձակել մարդասպանին: Ցավոք Ադրբեջանի գործողությունները եւ մեկ անգամ հաստատում են, որ Ադրբեջանի իշխանությունները ողջունում են Հայաստանի և հայերի նկատմամբ բռնությունը»:

Իսկ ԱՄՆ Արտաքին հարաբերությունների Կոմիտեի անդամ Բրեդ Շերմանը նշել է, որ « խորապես շփոթված է Հունգարիայի կառավարության որոշումից»:

«Ես կանգնած եմ մեր բարեկամ և դաշնակից Հայաստանի կողքին իր քաղաքացիների անվտանգության և խաղաղության համար տարվող հետագա պայքարում», - նշել է Բրեդ Շերմանը:

Իրանի դեսպանը շնորհակալություն է հայտնել երկրաշարժից տուժածներին ցուցաբերված օգնության համար

Սեպտեմբեր 01, 2012

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամադ Ռեիսին շնորհակալություն է հայտնել Թավրիզի երկրաշարժից տուժածներին Հայաստանի

կառավարության կողմից ցուցաբերված մարդասիրական օգնության համար: Այս մասին NEWS.am-ին հայտնեցին Արտակարգ իրավիճակների նախարարությունից:



«Զերմորեն շնորհակալություն եմ հայտնում Թավրիզի երկրաշարժից տուժածներին Հայաստանի կառավարության կողմից ցուցաբերված մարդասիրական օգնության համար: Նման իրավիճակներում ազնիվ բարեկամների վշտակցությունը միտքարում է այդպիսի բնական աղետների զոհերի մերձավորներին: Աստուծոց հայցում եմ, որ նման ողբերգություն տեղի չունենա որևէ ժողովրդի հետ: Սիրելի հայ ժողովուրդին մաղթում եմ քաջառողջություններ շահանալու, իսկ Հայաստանի հարգարժան կառավարությանը՝ փառք», - նշել է նա:

Մշակույթ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՆՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

XIX դ. 70-ական թվականներին Պետերբուրգում Ռուսաստանի շարժումները նոր թափ ստացան: Հայ Ռուսանոլ Կ. Մելիքովի բնակարանը այդ շարժումը գլխավորող կոմիտեի հավաքույթների գաղտնարաններից մեկն էր: Այդ կոմիտեի կազմում էին նաև վրացի Ա. Բաքրաձեն, ադրբեջանցի Իբրահիմ Շանակը և ուրիշներ: Երբ սկսվեց մեչակյան հայտնի գործի քննությունը, ապա կովկասցիների աջակցությամբ Նեչանև անցավ արտասահման, իսկ նրա խումբը, որի կազմում բավական թվով կովկասցիներ կային, ձերբակալվեց: «Հեղափոխական կոմունա» կազմակերպության ղեկավարներից Կ. Չերքեզիշվիլի, Ջ. Իշխանովի, Ի. Ռահիմովի, Ա. Հաջիբեկովի, Յ. Սարիբեկովի, Ի. Շանակի, Ս. Մուքափյանի գործը լսեց Սենատի հատուկ դատարանը, որի որոշմամբ մեչակյան հեղափոխական կազմակերպության անդամները խիստ պատիժների ենթարկվեցին: Նրանցից Ջավադ Իշխանովը մեչակյան առանձին կազմակերպություններից մեկի ղեկավարն էր և իր շուրջն էր համախմբել շատ կովկասցիների:

«Ժողովրդական դատաստան» կազմակերպության դատաքննությունը ավարտվեց 1871 թ. հունվարին: 87 դատապարտվածների թվում, որոնք մեղադրվում էին «ժողովրդա-գյուղացիական հեղափոխություն» բարձրացնելու մեջ, կային 16 կովկասցիներ:

Ոչ լրիվ տվյալներով XIX դ. 60-ական թվականներին Ռուսաստանի Ռուսանոլական շարժումներին մասնակցող անդրկովկասցի հայ, վրացի և ադրբեջանցի Ռուսանոլ երիտասարդների թիվը հասնում էր 114-ի: Նրանք սերտորեն կապված էին Անդրկովկասի հետ, տեղերում հեղափոխական գաղափարների տարածման և հեղափոխական խմբակների կազմակերպման գործում ակտիվ դեր էին կատարում:

Հայտնի է, որ 50-ական թվականների վերջերից Թիֆլիսում գործում էր ռազմաչին երիտասարդների գաղտնի խմբակ, որն ինտերնացիոնալ կազմ ուներ եւ աշխատանք էր տանում ոչ միայն մտավորականության, այլ նաև գյուղացիության մեջ: 1800 — 1862 թթ. Անտոն Պառցելաձեի նախաձեռնությամբ Թիֆլիսում ստեղծվում է ռազմաչին հայ, վրացի, ռուս Ռուսանոլ երիտասարդներից բաղկացած հեղափոխական նարոդնիկական խմբակ: Նրա մեջ էին մտնում Լ. Ջանիդիերին, Վ. Մուշաբեյիև, Կ. Իվանովը, Գ. Պալչաձեն, Սարկիսովը, Այվազովը, Մամուլովը եւ ուրիշներ:

Ա. Պառցելաձեն իր հուշերում նշում է, որ շաբաթական մեկ անգամ, ամեն տոնական օրերին կազմակերպում էինք գրական ընթերցանություն, կադում ռեֆերատներ եւ այլն: Հավաքույթներում մենք կարդում էինք նոր ուղղության ե բովանդակության ամսագրեր, լրագրեր, գրքեր: Մեր ճեռքն էին ընկնում նաև արտասահմանյան հրատարակություններ:

Այդ գրականությունը պետք է ստացվեր կամ Պետերբուրգից, կամ էլ անմիջապես արտասահմանից: Պարզ է, որ Պետերբուրգից դա կարող էր ստացվել անդրկովկասցի Ռուսանոլների միջոցով, իսկ անմիջապես արտասահմանից՝ կովկասյան ուղիներով: Գրականությունից հայտնի է, որ «Լոնդոնյան պրոպագանդիստների» արտասահմանյան կոմիտեն այդ գործը հանձնարարել էր Մ. Նալբանդյանին, որի օգնականն էր Բակունինի կողմից երաշխավորված հեղափոխական Վորոնովը: Մ. Բակունինի և Մ. Նալբանդյանի մասնակցությամբ մեջ, խոսվում է գաղտնի կերպով կովկաս առաքվող արգելված գրականության մասին, հիշատակվում է մասնավորապես Թիֆլիսը: Տարբեր ժամանակներ Թիֆլիս են այցելել թե Մ. Նալբանդյանը և թե Վորոնովը: «Իսկ արտասահման մեկնելուց առաջ Թիֆլիսի առաջադեմ մտավորականությունը Նալբանդյանի պատվին կազմակերպում է ջերմ ընդունելություն: Այս բոլորը ցույց է տալիս, որ Նալբանդյանը սերտ համագործակցության մեջ էր Թիֆլիսի հեղափոխական երիտասարդության հետ:

Այդ հեղափոխական պայքարի բովում էր կոփվում Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական երիտասարդների ջերմ բարեկամությունն ու համագործակցությունը հանուն սոցիալական եւ ազգային ազատագրության: 1861 թ. գյուղացիական ռեֆորմը Ռուսաստանում և նրանից բխող ռեֆորմները Վրաստանում՝ 1864 — 1865 թթ՝ և Ադրբեջանում ու Հայաստանում՝ 1870 թ. նպաստեցին բուրժուական հարաբերությունների և կապիտալիզմի զարգացմանը: Սակայն ռեֆորմներից հետո էլ կալվածատերերն ու վաշխառուները շարունակում էին կողոպտել «ազատագրված» գյուղացիությանը: Նախկինի պես տիրապետող էր կալվածատիրական հողատիրությունը: Կալվածատերը լավագույն հողերն իրեն էր վերցնում, իսկ ոչ պիտանի մասը իբրև բաժնեհող, առանձնացնում գյուղացիներին: Գյուղացին բավականին ծանր պայմաններով պետք է ետ գներ

բաժնեհոլը, բայց դրա համար նա պետությունից վարկ չէր ստանում, ինչպես Ռուսաստանում: Այսպիսով, գյուղացիների, «ազատագրումը» Անդրկովկասում կատարվում էր ավելի ծանր պայմաններում, որի հետևանքով նրանք գտնվում էին ավելի վատթար վիճակում, կախման մեջ էին կալվածատերերից, բեգերից ու աղալարներից, մելիքներից ու մուլթաղարներից:

Անդրկովկասում հողի 70,8 տոկոսը գտնվում էր պետության և կալվածատերերի ձեռքում: Գյուղացիության մի մասը բուրդով և գոթով էր հողից, իսկ մի զգալի մասն էլ տառապում էր սակավահողությունից: Դրությունն ավելի ծանր էր Երևանի նահանգում, որտեղ հողի 70,1 տոկոսը պետական էր, 25,6՝ կալվածատիրական, 2,1՝ վանքապատկան, 0,1 տոկոսը՝ մեչիդական և այլն: Այդ վիճակն ուժեղացրեց դասակարգային հակասությունները, արագացրեց գյուղացիության պառակտման գործընթացը: Երկաթուղային շինարարությունը և արդյունաբերության զարգացումը քաղաքներում կլանում էին գյուղի ընչազուրկ բնակչությանը, համալրում բանվոր դասակարգի շարքերը: Արտագնացությունը գյուղից դեպի քաղաք մեծ չափերի էր հասնում: Ինչպես նշում է Վ. Ի. Լենինը «ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամ փոխվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»:

Երևանի նահանգում արագ թափով աճում էր պղնձի արդյունաբերությունը: 1858 թ. հետ համեմատած 1900 թ. պղնձի արտադրությունը Ձանգեզուրում աճեց 20 անգամ, իսկ Ալավերդում՝ մոտ 30 անգամ 78: 1896-1900 թթ. կրկնապատկվեց գինու-կոնյակի արտադրությունը: Անդրկովկասում ուժեղ դիրք էր գրավում արտասահմանյան կապիտալը: Դրա հետևանքով արագանում էր արդյունաբերության զարգացումը, աճում էին բանվոր դասակարգի շարքերը, ուժեղանում աշխատավորների շահագործումը: Եթե 1879 թ, Բաքվի բանվորների թիվը հազիվ 1800 էր, ապա 1902 թ, այնտեղ արդեն աշխատում էր 65 հազար մարդ: Այդ բանվորների 20-22 տոկոսը հայեր էին: Բաթումի 4000 բանվորներից հայեր էին 1500-ը, մեծ մասամբ Արևմտյան Հայաստանից, թուրքական յաթաղանից փախած: Արևմտահայերը զգալի թիվ էին կազմում նաև Բաքվի, Թիֆլիսի, Ալավերդու և Ձանգեզուրի բանվորական ինտերնացիոնալ կոլեկտիվներում:

Ծանր էր բանվորների վիճակը: Ղափանում և Ալավերդում աշխատանքային օրը տևում էր 12 —14 ժամ՝ 50-70 կոպ. օրավարձով: Արագորեն քայքայվող ավատատիրությունը գյուղում ևս տեղի էր տալիս ապրանքային հարաբերությունների: Ռուսաստանի արագ զարգացող արդյունաբերության պահանջները բավարարելու համար Երևանի նահանգում լայն տարածում են գտնում բանբակագործությունն ու խաղողագործությունը: Առևտրական հողագործության ընդլայնման հետևանքով հողը կենտրոնանում է կուլակների-վաշխառուների ու կապիտալիստների ձեռքում: Գյուղացիությունը հողազրկվում և աղքատանում է, դիմում է բատրակության և արտագնացության: Երևանի նահանգից արտագնացների թիվը 1898 թ. կազմում է 20 հազար մարդ: Ձանգեզուրի գավառի Խնձորենկ գյուղից 1902 թ, Բաքվում աշխատանքի անցածների թիվը հասնում է 1300-ի:

Տեղական և օտար ճնշողների շահագործումն ու հալածանքները անտանելի ծանր վիճակ են ստեղծում աշխատավոր մասսաների համար: Շատ դիպուկ է ասել այդ առթիվ մեծ բանաստեղծը.

*Ուր թալանում են մերոնք ու այլերը,
Ուր հոսում է միշտ արցունքու արյուն:
(Հովհ. Թումանյան)*

XIX դ. 80-ական թվականներից ուժեղացող ցարական ռեակցիայի պայմաններում սոցիալական և ազգային հակասությունները Անդրկովկասում և Հայաստանում ծայր աստիճան սրվում են: Ուժեղանում է գրաքննությունը, փակվում են հայկական դպրոցներն ու մանուկի առաջադեմ օրգանները: Հետապնդվում են և բանտ նետվում ազգային-ազատագրական պայքարի կոչող գործիչները:

Ազգային ու սոցիալական ճնշումը աշխատավորությանը հեղափոխական պայքարի է մղում: Գյուղացիական ելույթները շատ դեպքերում վեր են ածվում զինված ընդհարումների: 1880 թ. սկսած այդպիսի մի շարք ելույթներ տեղի ունեցան Երևանի գավառի Պտղմի, Բաշ Գյառնի, Դալար, Էջմիածնի գավառի Ջանֆիդա և Ալեքսանդրապոլի ու Նոր-Բայազետի գավառների մի շարք գյուղերում: Հետագայում բանվոր դասակարգի ձևավորմանը այդ պայքարն ավելի կազմակերպված բնույթ ստացավ:

Արդյունաբերական ձեռնարկություններ են ստեղծվում նաև Արևմտյան Հայաստանի հատկապես քաղաքներում և գյուղական վայրերում: Առևտրի եւ ապրանքափոխանակության զարգացումը սրում է դասակարգային հակասությունները: Սոցիալական ու ազգային ճնշման ուժեղացման հետևանքով առաջանում է բանվորների ու գյուղական մշակների մի հոծ բանակ, որն ապրուստի միջոցներ փնտրելու համար մեկնում է հեռավոր քաղաքներ: Բանվոր դասակարգի ձևավորման այդ պրոցեսը, որը դասակարգային պայքարի սրման արդյունք էր, նոր երանգ է մտցնում ոչ միայն սոցիալական պայքարի, այլ նաև ազգային-ազատագրական շարժումների ընթացքի մեջ՝ այդ շարժումներին տալով տնտեսական հիմք և ինտերնացիոնալ ոգի: Սակայն դրա կողքին, բուրժուազիայի հզորացմանը զուգընթաց, ուժեղանում է տարբեր երկրների կապիտալի մրցակցությունը, ազատ շուկաներ ձեռք բերելու մարմաջը, և այդ հողի վրա բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը գնալով ավելի ու ավելի ակտիվ դիրք է բռնում: Այդ պայքարը սրվում է ոչ միայն տարբեր երկրների բուրժուազիայի միջև, այլ նաև նույն երկրի տիրապետող մեծապետական և ճնշված ազգերի միջև, որը խանգարում է ճնշվածների ազատագրական պայքարին:

Շար.15

Սոհեթ

Մեր Անցած Ճամբան

Թ. Ղարախանյան Սիրակցի

Ինչպես գիտենք, պարսկաստանի հայաբնակ գաւառներից, հատկապես Փերիսից եւ Չարմահալից 1946 թվականին արտագաղթ կատարվեց դէպի Մայր հայրենիք, այդ գյուղերից էին Չարմահալ գաւառի Աղբուլաղ հայկական գյուղը, որի գաղթից մնացել էին երեք ցավալի բայց ոգեշնչող

հիշատակներ: Մեկը Գյուղի մեջտեղում եկեղեցին էր որ տեղի պարսիկ գյուղացին «Մասչեդ» (mzkit) էր օգտվում առանց փոփոխության և մյուսը քանդված ու փլված հին հայկական դպրոցն էր գյուղի արեւելյան մասում որ անտերությունից միայն մէկ սենյակն էր կանգուն մնացել, որովհետև պարսիկ գյուղացիների ասությանը իրենք հողագործության համար էին քաշվել այս գյուղը ոչ թե դպրոց ունանալու եւ այդքան ցանկություն չունեին նոր սերնդին կրթության տալու, ուրեմն մի երկու երեք տարի փակ էր մնացել, մի քանի տարի էլ այժ ու ոչխար էին պահել ու կամաց-կամաց դպրոցի դուռ, պատուհան ու կտուրի գերանները քանդել վառելիք էին օգտագործել մինչեւ մի անկյունի սենյակն էր մնացել: Երրորդը գյուղի դրսում աղբյուրի մոտի ծառաստանն էր որ դեպքերի բերումով իմ զինծառայության ժամանակ հայտնաբերեցի հայերի հետ կապված ազգային մեծահոգությունը:

Հայաթափ **Աղբուլաղ** գյուղը տափարակ կանաչագարդ երկար տարածքի վրա էր կառուցված: Այս ժամանակ հատ ու կենդ մեքենանները հին ժամանակվա կարավանների ճանապարհների հետքերով էին գյուղերը երթեւեկում եւ մինչեւ «Իրանի Իսլամական Հանրապետության» տարիներին որ ասֆալտապատվեցին գյուղերի ճանապարհները, մինչ այդ մեր զինվորական Ռաման Զորքի ծառայության օրերին ճանապարհները դեռ հողոտ ու փոշոտ էին: **Աղբուլաղ** գյուղի աշխարհագրական դիրքը կարելի էր այսպէս տեսնել... **Արեւմուտք**-ում գտնվում էր մեծ բրբախոս ԲՕԼԳԱԶԻ գյուղը, որտեղից էլի դեպի արեւմուտք բլուրներից անց գտնվում էր մի օտար հայկական գյուղ որ մեծ մասամբ հայրենադարձվել էին բայց դեռ փոքրաթիվ հայ ընտանիքներ էին ապրում այս Չարմահալ գավառի **Մամուքա** գյուղում իր հարուստ պտղի ծառաստաններով, գյուղամեջ եկեղեցիով եւ գյուղի առջեվում կառուցված դեռ շեն ու կանգուն դպրոցը: Այդ օրերին թեպետ պարսիկ ընտանիքներ էին ներքաշվել, գնացող հայերի տեղը բռնել բայց դեռեւս Գյուղապետը՝ Քալանթարը, հարգելի Սկրտում Մանսուրյանն էր: Մամուքա գյուղից էլի դեպի արեւմուտք գտնվում էր **Հաջիաբաղ** հայկական գյուղ, որ մասամբ հայրենադարձվեցին եւ դեռ փոքրաթիվ մնացողներ էին ապրում եւ աշխատում իրենց հայ գյուղապետ քալանթար, հարգելի Մինաս Եղիգարյանի ժամանակին:

Հյուսիսից էր բարձր բլուրների իր կրծքին ունենալով “ՏԵՐՏԵՐԻՎԱԼԵՆ” իր մշտադալար երեք կանաչ ծառերով: **Հարավից** մեծ գետ էր անցնում որի մյուս ափում 1946-ին օտար հայրենագնաց հայաթափ **Սինագան** գյուղն էր գրկված հսկայական լեռնաշղթայով իր հպարտ “ԲԱԼԼԱՐ” գագաթով: Սինագանից մի քիչ հեռու գտնվում էր արդեն փոքրացած “ՎԱՍՏԻՎԱՆ-ի ՇԱՄԲԸ” որ ասում էին մոտիկ անցյալում այնքան ճոխ է եղել դամիշներով եւ տարբեր ջրային անասուններով, որ ամեն տարի աշնանը շամբը կրակ էին տալիս վայրի անասունները հեռացնելու համար: **Վաստիգան** հայկական գյուղում մարդ չէր բնակվում, մնացել էր պստիլացած շամբով եւ հին ջրաղացը լեռների կրծքին փորված իր ջրհորով որ նմանվում էր Հայաստանի **Գեղարդի** եկեղեցու փորած քարայրներին: Օտար հիշատակելի վայրը **Վաստիգան** գյուղի գերեզմանոցն էր իր գյուղի քահանայի ամենամեծ գերեզմանաքարով, որ զարկելիս զորընգ-զորընգ արձագանք էր տալիս: Քարի վրա քանդակագործված էր «7 լիր թամբաբու է ծախսվի այս քարը բերելու քանդակագործել», այդ հսկա գերեզմանի կողքին գյուղի տիրուհու գերեզմանաքարն էր դրված որ ավելի փոքր էր նույն գյուղի տերտերի գրնգան քարից.....



Հանկի Բաղդասարյան

**Թամար Փանոսյան
Հայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی
تالیف تمار بانوسیان

- 56- Մեռնողից խարջ (հարկ) չեն ուզի:
خراج از خراب نخواهند.
- 57- Վշտին ուրախություն է հաջորդում,
դժբախտությանը՝ բախտ:
از بی هر گریه آخر خنده ای است.(مولوی)
- 58- Ուստին նրա տաշած քարից կճանաչեն:
اسباب خانه به صاحبخانه می رود.
- 59-Աղբյուրը ակից պղտորված է:
(Աղբյուրը ակեն պղտոր է)
آب از سرچشمه گل(آلود) است .
- 60-Գետն անցավ «սուրբ աստվածը» մոռացավ:
(Էշը կամուրջից անցացնել)
خرش از پل گذشت.

